ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՐՔ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆ ՇԱԲՈՅԱՆ

Խորհրդային 1920-ականների լուսավորական քաղաքականության մարտահրավերները հայ արվեստի հիմնարկման ճանապարհին

ԵՐԵՎԱՆ 2022

Նախաբան

Հայաստանի խորհրդայնացումից հետո պետության առջև ծառացած մշակութային, տնտեսական ու հասարակական մարտահրավերներին դիմակայելու խնդրում խորհրդային իշխանության համար վճռական նշանակություն ձեռք բերեց լուսավորությունը:[1] 1920-ականներին լուսավորական քաղաքականության անբաժան մասն էին կազմում նաև մեր հետազոտության առանցքը կազմող կրթական ու գեղարվեստական հաստատությունների հիմնադրման գործընթացները: Տնտեսապես ծայրաստիճան քայքայված նոր պետականությունն, այդուհանդերձ, նյութական ռեսուրսների գրեթե լիակատար բացակայության պատճառով ի վիճակի չէր դրված լուսավորական նախագծերն ամբողջապես իրագործելու: Ներկա հետազոտության նպատակն է, ուրեմն, նախ և առաջ ի ցույց դնել Խորհրդային Հայաստանի հիմնադիր ղեկավարների (Ալեքսանդր Մյասնիկյանի, Ասքանազ Մռավյանի, Աշոտ Հովհաննիսյանի) լուսավորական քաղաքականությունների և հայաստանյան իրականության միջև ի հայտ եկած սուր լարումները: Այս լարումներն առավել խորությամբ ի հայտ բերելու նպատակով է, որ հետազոտության մեջ զգալի տեղ ենք հատկացրել այս շրջանի տնտեսական, քաղաքական ու մշակութային պայմանների քննարկմանը: Վերջինիս անդրադառնալը կարևորում ենք, սակայն, ոչ իբրև մեր նյութը ձևավորող արտաքին, զուտ պատմական փաստեր: Դրանց կփորձենք մոտենալ նախ և առաջ մեզ հուզող հարցասիրության տեսակետից՝ դիտելով դրանք իբրև բարքի և քաղաքականության միջև ներքին հակասություններով ընթացող և 1920-ականների լուսավորական քաղաքականությունն էապես կազմավորող դինամիկ, հարաճուն գործընթացներ: Եվ քանի որ 1920-ականների խորհրդային շրջանը միատարր չէ, մենք սահմանափակվել ենք Նոր տնտեսական քաղաքականության շրջանում կազմավորված կրթական ու գեղարվեստական կոնկրետ հաստատությունների քննությամբ: Այսպես, հանրակրթական դպրոցների, առաջին բարձրագույն ուսումնական հաստատության՝ Պետական համալսարանի, ինչպես նաև մասնագիտական նկարչական առաջին դպրոցի՝ Գեղարվեստա-արդյունաբերական

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում *Բարք և քաղաքականություն* նախագծի ղեկավար Վարդան Ազատյանին՝ նախագծի հետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար ընձեռած հնարավորության և վստահության համար: Արժեքավոր դիտարկումների և մասնագիտական ուղղորդման համար երախտապարտ եմ նախագծի մասնակիցներ Իրինա Շահնազարյանին, Վարդան Ազատյանին, Սիրանուշ Դվոյանին, Աշոտ Գրիգորյանին և Նարե Սահակյանին: Նրանց հետ համատեղ աշխատանքն ու պարբերաբար իրականացվող քննարկումները մեծապես նպաստել են սույն աշխատանքի կայացմանը: Ներկա հետազոտությունը չէր հաջողի առանց ընկերական այն միջավայրի և հոգածության, որն ապահովել են Հովհաննիսյան ինստիտուտի աշխատակիցներ Լիանա Աղամյանը, Լուսինե Չերգեշտյանը, Հերմինե Ստեփանյանը, Խաթուն Ատիկյանը, Անժելա Հարությունյանը, Ինա Խոլոդովան, Միքայել Մարտիրոսյանը, Գոռ Ենգոյանը, Լուսինե Նավասարդյանը: Տեքստը գրելիս ցուցաբերած անգնահատելի օգնության համար երախտապարտ եմ իմ ընկերներին՝ Մերի Ղազարյանին և Արդա Խաչատուրյանին: Շնորհակալ եմ ընտանիքիս հետազոտության ընթացքում ցուցաբերած աջակցության համար: Աշխատանքի ողջ ընթացքում մշտապես գոտեպնդելու և կարևոր խորհուրդներով կիսվելու համար պարտական եմ Արմենակ Գրիգորյանին:

[1] Հայերի շրջանում լուսավորության քննարկման համար տե՛ս օրինակ՝ Լևոն Զէքիեան, «Արդիականութեան հայկական ճանապարհը», ըստ՝ *Հայաստանը Եվրոպայի ճանապարհին* (Երևան: Անտարես, 2005), էջ 57-69: Այստեղ Զէքիեանը նկատում է. «Լուսաւորականութեան գաղափարի իմաստին և կիրառման վերաբերող ինչ-որ շփոթութիւն նկատւում է խորհրդային և մի շարք միջին արեւելեան երկրների պատմագրութեան մէջ.... Այս մշակութագիտական ոլորտներում յաճախ կարելի է հանդիպել «լուսաւորութիւն» յղացքի երկդիմի կամ ժամանակավրէպ կիրառումներու, որով չի զանազանւում ԺԸ. դարի եւրոպական լուսաւորապաշտ շարժման բուն էութիւնը «լոյս» կամ «լուսաւորութիւն» եզրերի փոխաբերական իմաստից, որը կարող է բազմապիսի կիրառումներ ունենալ»: Տե՛ս *Հայաստանը Եվրոպայի ճանապարհին,* էջ 61: Խորհրդային լուսավորության կապը եվրոպականի հետ առանձին ուսումնասիրության թեմա է: Հետազոտության մեջ, այդուհանդերձ, նախընտրել ենք «լուսավորություն» կամ «լուսավորականություն» եզրույթների օգտագործումը՝ որպես 1920-ականների խորհրդահայ մամուլում լայնորեն կիրառվող և այդ շրջանի կրթական ու մշակութային քաղաքականությունները բնորոշող հասկացություն:

տեխնիկումի գործունեության օրինակով փորձել ենք երևան բերել լուսավորական քաղաքականություններն իրենց գործնական ու հակասական արդյունքների անկյան տակ: Միաժամանակ կարևոր է նկատի առնել, որ Խորհրդային Հայաստանի կրթամշակութային մի շարք հաստատություններ, ինչպես օրինակ՝ Հնությունների պահպանության կոմիտեն, Պետական համալսարանը, Գեղարվեստական դպրոցը, Երաժշտական ստուդիան, Պետական թանգարանը, ունեն հիմնադրման առավել վաղ պատմություն: Դրանց հիմքերը կապվում են Առաջին հանրապետության հետ. հաստատություններ, որոնք, այդուհանդերձ, Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններում կայանում էին տարբեր հեռանկարներում: Եթե առաջինի պարագայում խնդիրը ազգային պետության կառուցումն էր, երկրորդի պարագայում՝ ազգային հողի վրա՝ խորհրդային շինարարության:

Խորհրդային առաջին տարիներին նվիրված կրթական ու գեղարվեստական հաստատությունների ուսումնասիրման փորձը Հայաստանի համատեքստում նոր չէ: Այս ուղղությամբ տարված առաջին ծավալուն աշխատանքը 1950-ականներին գրված Վահան Հարությունյանի՝ *Սովետահայ կերպարվեստը 1920-1925 թվականներին* վերնագրով ատենախոսությունն է: Աշխատանքը, ժամանակի գեղարվեստական կյանքի մասին փաստագրական հարուստ նյութ մատակարարելով հանդերձ, ըստ էության, մնում է ստալինյան արվեստաբանության ուղեծրում: Այս կերպ հեղինակը մի կողմից միտված է խորհրդայնացման սկզբնաշրջանի գեղարվեստական կյանքում ի հայտ եկած հակասությունները միատարրացնելու և դրանք արվեստում ստալինյան սկզբունքների հաստատման համար մղվող պայքար դիտարկելու: Մյուս կողմից՝ հեղինակը չեզոքացնում է 1920-ականների սկզբի քաղաքական ողջ բարդ ընթացքը՝ խորհրդահայ ղեկավարության՝ Հայաստանի տեղական կարիքներից ելնող քաղաքականությունը բացարձակացնելով և այդպիսով նրանց իսկ դեմ բանեցնելով: Հարությունյանը մասնավորապես նկատում է.

> 1920-ական թվականների սկզբներին Սովետական Հայաստանի կուլտուրայի բնագավառում (և նույնիսկ որոշ ղեկավար պոստերում) բույն դրած «սպեցիֆիստները», ելնելով Հայաստանի «հատուկ» պայմաններից, հայկական կուլտուրայի և նրա տրադիցիաների «առանձնահատկություններից», ճգնում էին ապացուցել, որ այն օրինաչափությունները, որոնք հատուկ են ռուսական սովետական կուլտուրային, այն տնտեսական և քաղաքական օրենքները, որոնք ղեկավարում են նրա ընթացքը, նրան ուղղություն տալիս, չեն տարածվում Սովետական Հայաստանի կուլտուրայի վրա, որն իր սեփական ճանապարհն ու օրենքներն ունի՝ սկզբունքայնորեն տարբեր ռուսական սովետական կուլտուրայից:[2]

«Նման հայացքների տակ» Հարությունյանը տեսնում է «բուրժուական իդեոլոգիայի փորձ», որն է ըստ նրա՝ կտրել «սովետահայ կուլտուրան, առաջին հերթին՝ գրականությունը և արվեստը, սովետական կուլտուրայի ընդհանուր ընթացքից, այն կղզիացնել, պահել հին դիրքերում, երբ դեռ սովետականը նրա բովանդակության և ձևի մեջ չէր հաղթանակել»:[3] Սա մի մոտեցում է, որն, այդուհանդերձ, արմատապես հակադիր է

---

[2] Վահան Հարությունյան, *Սովետահայ կերպարվեստը 1920-1925 թվականներին*, ատենախոսություն (Երևան: Ա. h., 1953), էջ 5-6:

[3] Հարությունյան, *Սովետահայ կերպարվեստը 1920-1925 թվականներին*, էջ 6: Տե՛ս նաև Հարությունյան, «Պարտիայի դերը 20-ական թվականների սովետահայ կերպարվեստի զարգացման մեջ», *Սովետական արվեստ*, 1957, թիվ 7, էջ 8-15; Ռ. Գրիգորյան, «Սովետահայ կերպարվեստի առաջին քայլերը», *Երեկոյան Երևան*, 10 ապրիլի 1984 թ.:

Խորհրդային Ռուսաստանի հետ քաղաքական ընդհանուր օրակարգը տեղական իրականության սոցիալ-մշակութային կացության հետ կապակցելու խորհրդահայ ղեկավարության բարդ ու ներհակ գործելակերպին: Այս պարագայում խնդրահարույց է թե՛ հայաստանյան մշակութային կյանքի զարգացումներն ամբողջությամբ Խորհրդային Ռուսաստանից թելադրվող հրամայական դիտարկելը և թե այդ զարգացումները կենտրոնի մշակութային քաղաքականություններից արմատապես անջատ քննելը: Ուրեմն մեր խնդիրն է՝ առավել նրբազգաց լինել Հայաստանի մշակութային առանձնահատկությունների հանդեպ՝ միաժամանակ փորձելով դրանք հարաբերել իրենց պայմանավորող պատմական առավել լայն համատեքստի հետ:

Ստալինյան հռետորաբանության նույն դիրքերից է հեղինակը քննում նաև հայ նկարիչների, ճարտարապետների, քանդակագործների առաջին միավորման՝ 1916-ին Թիֆլիսում հիմնադրված Հայ արվեստագետների միության գործունեությունը: Շեշտելով հանդերձ, որ Միությունը խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրից կանգնել է Խորհրդային Հայաստանի «ջերմ պաշտպանի դիրքերում»՝ Հարությունյանը միանգամայն քամահրական, եթե ոչ ժխտողական լույսի ներքո է երևան հանում Առաջին հանրապետության հետ Հայ արվեստագետների միության կապերը:[4] Այսպես օրինակ՝ հեղինակը, անդրադառնալով Առաջին հանրապետությունում բացված միության երրորդ ցուցահանդեսին, գրում է.

> 1919 թ. ցուցահանդեսը ոչ թե դաշնակցականների կողմից որևէ կերպ խրախուսված և հատուկ կազմակերպված ցուցահանդես էր, այլ Հ. Ա. Միության նույն թվին Թիֆլիսում կազմակերպված երկրորդ ցուցահանդեսն էր, որն իր փակումից հետո, գրեթե առանց նկատելի փոփոխության, տեղափոխվեց Երևան: Դրա շնորհիվ ցուցահանդեսն, իհարկե, չէր կրում այն բնույթը, ինչը կցանկանային տալ նրան դաշնակցականները: Եվ դեռ ավելին: Ցուցահանդեսում կային նմուշներ, որոնք իրենց թեմաներով և լուծումներով գտնվում էին դաշնակցական իդեոլոգիայի հակառակ բևեռում:[5]

---

[4] Ավելորդ է նշել, որ Հայ արվեստագետների միության անդամներից շատերը, ինչպես օրինակ՝ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Ալեքսանդր Թամանյանը, անմիջական մասնակցություն են ունեցել Առաջին հանրապետության դրոշի, զինանշանի, թղթադրամների ու նամականիշների գեղարվեստական ձևավորման գործընթացներում: Առաջին հանրապետության և Հայ արվեստագետների միության համագործակցության համատեքստում պետք է դիտարկել նաև 1919-ին Հայաստանում կայացած միության երրորդ ցուցահանդեսից կառավարության գնումները, որոնք էլ հանդիսացել են նույն թվին Երևանում հիմնադրված Ազգային թանգարանի հիմքը: Տե՛ս օրինակ՝ «Կառավարական որոշումներ», *Կառավարութեան լրաբեր*, 13 մարտի 1920 թ.; «Քրոնիկոն. Հայկական զինանշանի պատրաստումը», *Ժողովուրդ*, 30 հունվարի 1920 թ.; «Կառավարական որոշումներ», *Ժողովուրդ*, 5 մարտի 1920 թ.; «Քրոնիկոն», *Ժողովուրդ*, 11 հունիսի 1919 թ.:

[5] Հարությունյան, *Սովետահայ կերպարվեստը 1920-1925 թվականներին*, էջ 83: Հայ արվեստագետների միությանը Հարությունյանի անդրադարձի համար տե՛ս նաև Հարությունյան, «Հայ կերպարվեստագետների անդրանիկ միավորումը», *Սովետական արվեստ*, 1956, թիվ 11, էջ 25-31: Մինչ Հայաստանի խորհրդայնացումը՝ Հայ արվեստագետների միությունը կազմակերպել է չորս ցուցահանդես, որոնցից՝ 1919-ին Երևանում բացված երրորդ ցուցահանդեսն առանձնահատուկ էր իր պատմական նշանակությամբ. «Սա առաջին դէպքն է, որ Հայաստանում հայ գեղաստեղծ միտքը իր արտադրութիւններն է ցուցադրում»: Տե՛ս Գեղասէր, «Հայ արուեստագէտների պատկերահանդէսը», *Հայաստանի աշխատաւոր*, 1 հունիսի 1919 թ.: Նորանկախ պետականության հռչակումից փաստացիորեն դեռ մեկ տարի էլ չէր անցել, երբ «Հայ Արուեստագէտներու Միութիւնն իւր ցուցահանդէսը, Հայաստանի կառավարութեան առաջարկութեամբ, Թիֆլիսէն Երևան փոխադրած» էր: Տե՛ս «Հայ Արուեստագէտներու Միութեան ցուցահանդէսը», *Աշխատանք*, 24 մայիսի 1919 թ.: Միության ցուցահանդեսին մամուլում եղած բազմաթիվ անդրադարձներից տե՛ս Man, «Հայ գեղարուեստագէտների միութեան պատկերահանդէսը Հայաստանում», *Ժողովուրդ*, 6 հունիսի 1919 թ.: Այստեղ հոդվածագիրը նշում է. «Երևանում ապրողի համար՝ էս վերջին ահ ու սարսափի, սովի ու համաճարակի տարիներն ապրող ժողովրդի համար միանգամայն զարմանալի ու տարօրինակ երևոյթ է՝ տեսնել գեղարուեստը գաղթականների սոված շարքերին սովոր աչքերով»: Տե՛ս նաև Man, «Հայ գեղարուեստագէտների միութեան պատկերահանդէսը Հայաստանում», *Ժողովուրդ*, 8 հունիսի 1919 թ.; Գ. Շահինեան, «Հայ արուեստագէտների նկարահանդէսը Երեւանում», *Հայաստանի աշխատաւոր*, 6, 8, 12 հունիսի 1919 թ.:

Նույն կերպ 1960-ականների խորհրդահայ պատմագրության մեջ Երևանի պետական համալսարանի հիմնադրումը կապում են Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հետ: Այս տեսակետին է հարում, օրինակ, Լյուդվիգ Ղարիբջանյանն իր *Երևանի պետական համալսարանը (1920-1930 թ.թ.)* ուսումնասիրության մեջ: Նա գրում է. «*Երևանի համալսարանը Հայաստանում սովետական իշխանության հաստատման արդյունքն է, սովետական կարգերի ծնունդը*» (ընդգծումը՝ հեղինակի):[6] Առաջին հանրապետության շրջանում համալսարան հիմնելու փորձերը դիտարկելով իբրև ինքնին ակնհայտ ձախողում՝ Ղարիբջանյանը նախ՝ քննության չի առնում Առաջին հանրապետության շրջանում համալսարանի հիմքում ընկած կրթական ըմբռնումները: Մյուս կողմից՝ հեղինակը անտեսում է հին մեծամասնական ղեկավարության որդեգրած այն մարտավարությունը, որը հեղափոխությամբ օրակարգային դարձած նոր՝ պրոլետարական մշակույթ ստեղծելու քաղաքական հրամայականին զուգահեռ, ուղղված էր անցյալի կրթական ու մշակութային ժառանգության վերարժևորմանը: Այսպես, անդրադառնալով Առաջին հանրապետությունում բացված Պետական համալսարանին՝ Ղարիբջանյանը նշում է.

> Ճշմարտությունը պահանջում է ասել, որ իրենց տիրապետության վերջին տարում դաշնակները համալսարան հիմնելու անհաջող փորձ իրոք արել են.... Սակայն մեծ աղմուկով բացված, բայց իրականում նույնիսկ որևէ գիտա-մանկավարժական գործունեություն չծավալած այդ «համալսարանը» հեռու է Երևանի պետական համալսարանի նախորդը լինելուց:[7]

1920-ականների կրթամշակութային կյանքին առնչվող հաջորդ ուսումնասիրությունները լույս են տեսել արդեն նորանկախ Հայաստանի համատեքստում: Դրանց թվում են Արթուր Ավագյանի՝ *Из истории художественной жизни Армении. 1920-1932* մենագրությունը, Ռուբեն Միրզախանյանի՝ «Խորհրդային Հայաստանի մշակույթի ձևավորման առաջին քայլերը (1920 թ. դեկտեմբեր-1921 թ. փետրվար)» ու «Կերպարվեստը և երաժշտությունը Խորհրդային Հայաստանում (1921-1925 թթ.)» հոդվածներն, ինչպես նաև Արարատ Աղասյանի՝ տասնամյակի գեղարվեստական կյանքին առանձին անդրադարձը *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում* աշխատության մեջ:[8] Այս աշխատանքներն արվել են մի կողմից ետևում ունենալով ստալինիզմի արդյունքում վարկաբեկված խորհրդային համակարգը, մյուս կողմից՝ ազգայինի (տվյալ դեպքում՝ արվեստի) ջատագովման ժամանակի քաղաքականությունները: Արդյունքում նշված ուսումնասիրությունները խորհրդայնացման սկզբնաշրջանի գեղարվեստական կյանքը

---

[6] Լյուդվիգ Ղարիբջանյան, *Երևանի պետական համալսարանը (1920-1930 թ.թ.)* (Երևան: Միտք, 1965), էջ 31:
[7] Ղարիբջանյան, *Երևանի պետական համալսարանը*, էջ 31-32:
[8] Տե՛ս Артур Авакян, *Из истории художественной жизни Армении. 1920-1932* (Ереван: Арминус, 2002); Ռուբեն Միրզախանյան, «Խորհրդային Հայաստանի մշակույթի ձևավորման առաջին քայլերը (1920 թ. դեկտեմբեր-1921 թ. փետրվար)», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2015, թիվ 1, էջ 306-317; Միրզախանյան, «Կերպարվեստը և երաժշտությունը Խորհրդային Հայաստանում (1921-1925 թթ.)», *Գիտական տեղեկագիր*, 2016, թիվ 1-2, էջ 5-27; Արարատ Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում* (Երևան: Ոսկան Երևանցի, 2009), էջ 78-95: Հիշյալ աշխատանքներում փորձ է արվել նաև վերանայելու Հայաստանի կրթական ու մշակութային հաստատությունների հիմնադրումը խորհրդային շրջանով սկսելու մոտեցումները: Իբրև առանձին ուսումնասիրություններ՝ նվիրված Առաջին հանրապետության մշակութային կյանքին, տե՛ս Գուրգեն Վարդանյան, *Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում (1918-1920 թթ.)* (Երևան: Գիտություն, 2003); *Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին* (*Գիտաժողովի նյութեր*, Երևան, 2018); Արթուր Ավագյան, «Հայաստանի առաջին հանրապետության մշակութային կյանքի պատմությունից», *Բանբեր* հայագիտության, 2018, թիվ 2, էջ 159-167; Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, էջ 75-77: Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների մշակութային հաստատությունների միջև զուգահեռները հայ արվեստի պատմության մեջ գեղարվեստական ավանդույթի ուշագրավ և վճռորոշ դրվագներից են՝ կարոտ մանրակրկիտ ուսումնասիրության:

երևան են հանում գլխավորապես խորհրդահայ բարձր մշակույթի ձևավորման և ազգային արվեստի նոր զարթոնքի անկյան տակ: Այսպես, օրինակ, Արարատ Աղասյանը նկատում է. «Ազգային արվեստը զարգացավ ու ճյուղավորվեց, զգալիորեն բարձրացավ ու կարևորվեց հասարակության մեջ նրա դերը»:[9] Հեղինակը հավելում է.

> Չնայած իշխանությունների վարած՝ Խորհրդային Միության կազմի մեջ մտնող տարբեր ժողովուրդների գեղարվեստական մշակույթների միջև ազգային առանձնահատկությունների «համահարթեցման» քաղաքականությանը, այդ շրջանի հայ կերպարվեստը ոչ միայն պահպանեց, այլև հստակեց[րեց] ու բյուրեղացրեց իրեն բնորոշ դիմագծերը:[10]

Այսպես Աղասյանը զանց է առնում այն, որ ազգայինն ինքը երկակի կառույց է՝ մասի և ամբողջի համադրությամբ կայացող: Ներկա պարագայում նա մի կողմից ազգայինի անունից, ըստ էության, չեզոքացնում է ազգայինը հնարավոր դարձնող «ուրիշ» մշակույթները: Մյուս կողմից հեղինակը անուշադրության է մատնում խորհրդահայ ղեկավարության՝ ազգային խնդիրները միջազգայինի հետ սերտորեն ներհյուսված, այլ ոչ թե ի հակադրություն դրանց տեսնելու՝ արդեն վերը հիշատակված մոտեցումները: Այսպես՝ օրակարգում ունենալով ազգային արվեստի ավանդույթների վերհանման քաղաքականությունները՝ այս աշխատանքները գնում են 1920-ականների հայաստանյան գեղարվեստական իրադարձությունների թվարկման ճանապարհով՝ առանց մանրակրկիտ ուշադրության արժանացնելու ժամանակի տնտեսական, հասարակական ու մշակութային այն գործոնները, որոնք պայմանավորել են Խորհրդային Հայաստանում կրթամշակութային կյանքի զարգացումները թե՛ դրական և թե՝ բացասական առումներով:[11]

Ներկա հետազոտությունն, ուրեմն, փորձ է՝ քննելու 1920-ականների Խորհրդային Հայաստանում լուսավորական նախագծերը ոչ թե դրանց հաջողման կամ ձախողման, այլ գործնականում հարուցած խնդիրների ու հետևանքների տեսանկյունից: Այս է պատճառը, որ մեզ համար առանցքային նշանակություն է ունեցել ոչ միայն թեմային առնչվող նոր ուսումնասիրությունների, այլ նախ և առաջ սկզբնաղբյուրների կարևորումը: 1920-ականների լուսավորության խնդիրների քննարկումները լայնորեն տեղ են գտել ժամանակի պաշտոնական մամուլում. մեզ համար հարացուցային են եղել Երևանի՝ *Խորհրդային Հայաստան*, Թիֆլիսի՝ *Մարտակոչ* և *Կարմիր աստղ*, ինչպես նաև Բաքվի՝ *Կոմմունիստ* հանդեսները: Այսպիսով կենտրոնանալով սկզբնաղբյուրների վրա՝ փորձել ենք ընդառաջ գնալ նյութին, հասկանալ այն իր հակասական ծավալման մեջ և իրեն «իրենով իսկ խոսեցնելու» հնարավորություն տալ. սա հատկապես այժմեական է այսօր, երբ ստալինյան քաղաքականությունները, թվում է, արմատապես ջնջել են թե՛ ինքներս մեզ հասկանալու և թե՝ մեր իսկ պատմության հետ հարաբերվելու կարողությունները:

---

[9] Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, էջ 78:
[10] Աղասյան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, էջ 79:
[11] Վերոնշյալ բոլոր ուսումնասիրությունները, այդուհանդերձ, օգտակար կարող են լինել ինչպես իրենց ժամանակի հասարակական-քաղաքական ու մշակութային խնդիրների վերըմբռնման, այնպես էլ թեմային առնչվող նոր հետազոտությունների իրականացման համար (իբրև նմանօրինակ փորձեր տե՛ս Իրինա Շահնազարյան, *Ռեալիստական արվեստի խնդիրները 1920-ական թվականների առաջին կեսի պարբերական մամուլում*, մագիստրոսական թեզ (Երևան: ԵԳՊԱ, 2014), Աննա Համբարձումյան, *Պրոլետարական արվեստի խնդիրները 1920-ական թվականների առաջին կեսի գրական հանդեսներում*, մագիստրոսական թեզ (Երևան: ԵԳՊԱ, 2014), ինչպես նաև Ելենա Այդինյան, *Միքայել Արուտչյանը և պրոլետարական արվեստի գաղափարները*, մագիստրոսական թեզ (Երևան: ԵԳՊԱ, 2011)): Դրանք են հաճախ երևան հանել այն կետերը, որոնք մեր հետազոտության մեջ առանձնակի ուշադրության և վերաբերմունքի են արժանացել:

Գլուխ 1. Մշակութային քաղաքականության ձևավորման նախադրյալները 1920-ականներին

Բիրտ մարտավարության և տեղական կարիքների միջև. «ռազմական կոմունիզմից» անցումը Նոր տնտեսական քաղաքականության

1920 թվականին Հայաստանի խորհրդայնացմամբ նոր իշխանությունը կանգնեց քաղաքական, տնտեսական, հասարակական ու մշակութային լուրջ մարտահրավերների առջև: Դա պայմանավորված էր մի կողմից դարասկզբի քաղաքական իրադարձություններով, մյուս կողմից՝ պատմականորեն ձևավորված մշակութային տեղական առանձնահատկություններով: Առաջին աշխարհամարտի, ցեղասպանության, ազգամիջյան բախումների, ինչպես և Առաջին հանրապետության ինքնիշխանության պահպանման կարճաժամկետ փորձի հետևախորքին հաստատված խորհրդային կարգերն առաջին կոմունիստ ղեկավարները դիտարկում էին իբրև սեփական երկրում քաղաքական կայունության և խաղաղ ստեղծագործական աշխատանքի հնարավորություն: Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանն այս հարցում հստակ էր.

> Արտասահմանում թաքնված խորհրդային իշխանության հակառակորդների այն դիտողությունը, որ չի կարելի խոսել Հայաստանի անկախության մասին, երբ այնտեղ են գտնվում ռուսական զորքերը, քննադատության չի դիմանում: Ռուսական զորքերը Հայաստանում մնում են ոչ թե ինչ-որ շահախնդիր նպատակների համար, այլ այն պատճառով, որ նրանց կարիքն զգում է Հայաստանը, որպեսզի հնարավորություն ունենա հանգիստ ու խաղաղ կառուցելու իր կյանքը:[12]

Խորհրդային Հայաստանի ղեկավարներն իրենք, այդուհանդերձ, խորապես գիտակցում էին քաղաքական նպատակադրումների և նոր խորհրդայնացած Հայաստանի իրականության միջև առկա անհամաչափությունը: 1920-ականների սկզբի խորհրդահայ մամուլը դիտարկելիս մեր առջև պատկերանում է համաշխարհային կոմունիզմի հաստատման հեղափոխական ճանապարհը բռնած Խորհրդային Հայաստանի իրապես անմխիթար դրությունը: Արդարադատության ժողկոմ, գրականագետ Արտաշես Կարինյանի խոսքով՝ «Խորհրդային Հայաստանը միակն է բոլոր Բանուորա-Գիւղացիական Հանրապետութիւնների մէջ, որ ապրում է ամենածանր և տագնապալից օրեր: Երկիրը

---

[12] Ալեքսանդր Մյասնիկյան, *Երկեր հինգ հատորով*, հ. 5 (Երևան: Մուղնի, 2007), էջ 105: Մինչ խորհրդայնացումը Հայաստանի քաղաքական իրադարձությունների, դաշնակցական ղեկավարության վարած քաղաքականության, ինչպես նաև դրա արդյունքում ժողովրդի մեջ տիրող տրամադրությունների մասին պատկերացում է տալիս Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանը՝ գրված Հարություն Թուրշյանի՝ *Սարդարապատի հերոսամարտը* աշխատության համար: Տե՛ս Հարություն Թուրշյան, *Սարդարապատի հերոսամարտը* (Երևան: Հայաստան, 1965), էջ 3-19: Այս առումով ուշագրավ է նաև Հովհաննիսյանի «Վերհիշումներ Հայաստանի սովետացման նախապատմությունից» հոդվածը: Այստեղ Հովհաննիսյանն, անդրադառնալով Հայաստանի խորհրդայնացման նախադրյալներին, նկատում է. «Օբյեկտիվորեն Հայաստանի բանվորների ու գյուղացիների հեղափոխական ձերբազերծմանն էր նպաստում նաև նույն տարվա աշնանը երկրում սկսված հայ-թուրքական կռիվը, որն ավերի ու քայքայման, սովի ու քաղցի, վարակի ու մահտարաժամի, բռնի գաղթավարության ու հարկադրական աշխատանքի էր դատապարտում Հայաստանի աշխատավորությանը: Այնուամենայնիվ, այդ պահին հայ ժողովրդի մեջ խմորվում էր այն գիտակցությունը, որ միայն ժողովրդական զանգվածներին ծառայող սովետական իշխանությունը կարող է վերջ դնել մաուզերիզմի արկածախնդրական շահատակություններին, նոր ուժ ու ավիշ ներարկելով երկրին, նպաստելով նրա նյութական ուժերի աճին ու բարոյական կարողությունների վերածննդին»: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, «Վերհիշումներ Հայաստանի սովետացման նախապատմությունից», *Լենինյան ուղիով*, թիվ 11, 1970, էջ 43:

քայքայւած, քանդւած և աւերւած է հիմնովին»:[13] Նոր պետականությունն առերեսվում էր բազմահազար որբերի ու գաղթականության խնամքի, սովի ու համաճարակային հիվանդությունների հաղթահարման խնդիրների հետ: «Հարցերի շարանը մեծ է»,- գրում է Ալեքսանդր Մյասնիկյանը 1921 թվականի նոյեմբերին: Խորհրդային Հայաստանը դիտարկելով իբրև «վշտի, հեծեծանքների, սուգի և տառապանքների մի դժոխք»՝ Մյասնիկյանը շարունակում է.

> Բուրժուական Հայաստանը և դաշնակցական գործելակերպը առաջ բերին՝ բազմաթիւ հայ և մահմեդական *գաղթականութիւն*, ընչազուրկ, մերկ, քաղցած, ողբակոծ կիսամեռ, հիւանդ, մարդկային կերպարանքը կորցրած, տարագիր ու հալածական գաղթականութիւն: Սովետական Հայաստանը ստացաւ գաղթականներից ու թշւառներից բաղկացած մի այլասերւող ու ապամարդկայնացած ժողովուրդ: Սա չափազանցութիւն չէ, այլ փաստ: Նա ստացաւ *որբերի* և կմախքացած *երեխաների* հարիւր հազարաւոր մի բանակ (ընդգծումը՝ Մյասնիկյանի):[14]

Դարասկզբի քաղաքական վայրիվերումները ծանր հետևանքներ էին թողել նաև արտադրության՝ արդյունաբերության, երկաթուղային տրանսպորտի, ինչպես նաև ժողովրդի հիմնական զբաղմունքը կազմող գյուղատնտեսության վրա: Կրճատվել էին ցանքատարածություններն ու անասունների գլխաքանակը, նվազել էր բամբակի ու հացահատիկային կուլտուրաների ընդհանուր արտադրանքը, քայքայվել էր ոռոգման համակարգը:[15] Խորհրդայնացման սկզբնաշրջանի մամուլում տեղ գտած հոդվածներում ամենևին պայծառ գույներով չէր պատկերանում Հայաստանի տնտեսական դրությունը.

> Երկիրը աւեր, դաշտերը խոպան, այգիներն անմշակ, արտերը անվար: Երկրագործը ոչ միայն այժմ, մինչև նոր հունձը ուտելու հաց չունի, այլ և վար ու ցանքս չունի, որ ապագայի յոյսով մի կերպ քարշ տայ իր գոյութիւնը.... Մի խօսքով ամեն ինչ քայքայւած է: Գիւղացու տնտեսութեան միայն բեկորներն են մնացել:[16]

Այս համատեքստում իրականացված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն, իր հերթին, սրել էր վիճակը տնտեսական-քաղաքական ոլորտում: «Ռազմական կոմունիզմը», որ հեղափոխությունից հետո նոր հասարակարգի ձևավորման գործընթացներում Խորհրդային Ռուսաստանի որդեգրած տնտեսական քաղաքականությունն էր, իբրև երկրի տնտեսական կյանքը կազմակերպող համալիր միջոցառումներ, խորհրդայնացման սկզբնաշրջանում որդեգրվել էր նաև Խորհրդային Հայաստանի պետական գործիչների կողմից:[17] Այն ենթադրում էր ապրանքադրամական ու շուկայական փոխհարաբերությունների շրջանցմամբ՝ արմատական միջոցներով սոցիալիստական տնտեսության կառուցման ռազմավարություն: Հայաստանի առաջին կոմունիստ ղեկավարներից Աշոտ Հովհաննիսյանը նկատում էր, որ «ռազմական կոմունիզմի»

---

[13] Ա. Կարինեան, «Խորհրդային Հայաստանը եւ հայ ինտելլիգենցիան», *Կարմիր աստղ*, 26 մարտի 1921 թ.:
[14] Ալ. Մարտունի, «Հին եւ նոր Հայաստանը», *Խորհրդային Հայաստան*, 29 նոյեմբերի 1921 թ.:
[15] Դարասկզբի քաղաքական իրադարձությունների արդյունքում Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական ծանր վիճակի մասին տե՛ս Վլադիմիր Ղազախեցյան, *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.* (Երևան: ՀՍՍՀ ԳԱ, 1975), էջ 79-80; *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 7 (Երևան: ՀՍՍՀ ԳԱ, 1967), էջ 167-173; *Հայոց պատմություն*, հ. 4, գիրք 1 (Երևան: Զանգակ-97, 2010), էջ 52-61:
[16] Շմաւոն, «Ի՞նչ է սպասում մեզ», *Կարմիր աստղ*, 10 ապրիլի 1921 թ.: Խորհրդային առաջին տարիներին Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին տե՛ս նաև Ա. Ս. Արաբաջի, «Հայաստանի տագնապալից վիճակը», *Կարմիր աստղ*, 10 ապրիլի 1921 թ.; «Հայաստանի արդի վիճակը» *Կարմիր աստղ*, 11 մայիսի 1921 թ.:
[17] «Ռազմական կոմունիզմի» մասին մանրամասն տե՛ս Վլադիմիր Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.* (Երևան: Պատմության ինստիտուտ, 2006), էջ 21-26:

շրջանում պետական ղեկավարների օրակարգում էր «արդյունաբերության ու յերկրագործության նոր կապի միանգամից և անմիջորեն իրագործումը»:[18] Սակայն, հեղինակի իսկ կարծիքով՝ այդ չհաջողվեց և չէր կարող հաջողվել «մեր ընդհանուր տեխնիքական հետամնացության պատճառով»:[19] Ուղեկցվելով ժողովրդի պարենամթերքի (հացահատիկ, միս, անասուն), արդյունաբերական ապրանքների մեծամասշտաբ բռնագրավումներով՝ այն վերջնականապես քայքայել էր երկրի տնտեսական վիճակը՝ արդյունքում հանգեցնելով ժողովրդական դժգոհությունների, ՀՅԴ հակախորհրդային շարժման և քաղաքացիական կռիվների:[20]

Հայաստանում մոտ ամիս ու կես տևած քաղաքացիական պատերազմի ավարտից (1921 թ. փետրվարի 18-ից մինչև ապրիլի 2) և խորհրդային իշխանության վերահաստատումից հետո առաջնային է դառնում խաղաղ աշխատանքի համար պայմանների հաստատումը: Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստներին ուղղված իր նամակում Վլադիմիր Լենինը հորդորում էր խուսափել ռուսական «շաբլոնից», չկրկնել նրա օրինակը, վարել տեղական առանձնահատուկ պայմաններից բխող քաղաքականություն, առավել մեղմ, զգուշավոր ու զիջողական վերաբերմունք ցուցաբերել մտավորականության, մանր բուրժուազիայի և հատկապես գյուղացիության նկատմամբ: Լենինը մասնավորապես նկատում է.

> Հարկավոր է, որ Անդրկովկասի կոմունիստները գիտակցեն իրենց տեղի *առանձնահատկությունը*, իրենց պետության դրությունն՝ ի տարբերություն Ռուսաստանի դրության և պայմանների, գիտակցեն մեր մարտավարությունը չընդօրինակելու անհրաժեշտությունը, այլ մտածված կերպով փոխակերպեն դա տեղական կոնկրետ պայմաններին համապատասխան.... Ոչ թե տառացիորեն փոխառեն մեր տակտիկան, այլ հասկանան դրա էությունը, իմաստը, ինչպես նաև աչքի առաջ ունենան 1917-1921 թվականների փորձից քաղված դասերը (ընդգծումը՝ Լենինի):[21]

Մյասնիկյանը, որ Հայաստան էր եկել Լենինի մանդատով՝ վարելու տեղական կարիքներից բխող առավել նուրբ ու շրջահայաց քաղաքականություն, Հայաստանի կոմունիստական կուսակցության հետագա անելիքները պարզող իր զեկուցման մեջ արձագանքում էր Լենինի քաղաքական այս կոչին.

> Մեր գործը՝ տնտեսական, շինարարական խնդիրն է: Ժամանակը չէ թէորիաների: Կոմունիզմը, ինտերնացիոնալը տօնական խոսքեր չեն: Կոմունիզմ, ինտերնացիոնալ՝ նշանակում է գիւղացու համար-խաղաղութիւն, հող, սերմացու, կուշտ կերակուր: Այս կոմունիզմին մենք պետք է ծառայենք .... Մեր նոր գիծը աւելի

---

[18] Աշոտ Հովհաննիսյան, *Մեր հեռանկարները յեվ լենինիզմը* (Երևան: Պետհրատ, 1926), էջ 31:
[19] Հովհաննիսյան, *Մեր հեռանկարները յեվ լենինիզմը*, էջ 31:
[20] Գյուղացիության մեջ մեծ դժգոհություններ առաջացրած այդ բռնագրավումներն իշխանության կողմից արդարացվում էին Կարմիր բանակի կարիքները հոգալու հիմնավորմամբ: Տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.*, էջ 24-25:
[21] В. И. Ленин, *Полное собрание сочинений*, հ. 43 (Москва: Пол. Лит., 1963), էջ 198-200: Ի տարբերություն Ռուսաստանի, որը տնտեսապես մի զգալի առումով կտրված էր կապիտալիստական առաջավոր երկրներից, Լենինը կովկասյան հանրապետությունների առանձնահատկություններից էր համարում նաև կապիտալիստական Արևմուտքի հետ առավել արագ և հեշտ ապրանքափոխանակության հնարավորությունը: Կովկասյան հանրապետությունների առանձնահատկությունների թվում Լենինը նշում էր նաև նրանց «առավել գյուղացիական» լինելու հանգամանքը:

> շեշտակի պիտի ընդգծենք Հայաստանի համար: Մենք պիտի աշխատենք աւելի մեղմ միջոցներով: Այստեղ դրութիւնն ուրիշ է, քան Ռուսաստանում....:[22]

Այսպես, Առաջին աշխարհամարտի և քաղաքացիական պատերազմի համատեքստում իրականացված «ռազմական կոմունիզմի»՝ կարճ ժամանակամիջոցում արտադրության սոցիալիստական հիմքերը դնելու անհաջող փորձից հետո Նոր տնտեսական քաղաքականությունն էր, որ դարձավ սոցիալիստական տնտեսություն կառուցելու կուսակցության հաստատած նոր եղանակը: Հակառակ մասնավոր սեփականության հաղթահարման հիման վրա «ռազմական կոմունիզմի» խիստ և ծայրահեղ միջոցների՝ ՆԷՊ-ը պետք է ընթանար տնտեսական խաղաղ և մեղմ քաղաքականության, աստիճանական և չափավոր փոփոխությունների ճանապարհով: Որդեգրված հանդուրժողական այդ քաղաքականությունները ենթադրում էին տնտեսական բնույթի զիջումներ, որոնք դրսևորվեցին մանր և միջին ձեռնարկություններին, այսինքն՝ կապիտալիստական տնտեսության որոշ տարրերին տեղ տալու և չափավոր կերպով դրանք խրախուսելու պետական քաղաքականությամբ:[23] ՆԷՊ-ն, ըստ էության, հստակ վերջնաժամկետ չունեցող քաղաքականություն էր: Կապիտալիզմից սոցիալիզմ անցումը պետք է ընթանար երկարաժամկետ ճանապարհով. նպատակը կոմունիստական կուսակցության համար նէպական երկիրն ի վերջո սոցիալիստական դարձնելն էր:

Խորհրդային կարգերի վերահաստատումից հետո Հայաստանում ներքին քաղաքական իրավիճակի կայունացմանն էր միտված նաև Հեղկոմի կազմի փոփոխությունը: Խիստ և ծայրահեղ մարտավարության կողմնակից երիտասարդ կադրերին՝ Հայկազ Կոստանյանին, Իսահակ Դովլաթյանին, Ավիս Նուրիջանյանին, Գևորգ Ալիխանյանին պետք է փոխարինեին առավել շրջահայաց քաղաքական մոտեցումներ դրսևորող ավագ սերնդի մեծամասնական գործիչները՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին), Սաքո Համբարձումյանը, Ասքանազ Մռավյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Արամայիս Երզնկյանը և այլք:[24] Վերջիններիս անվան հետ պետք է կապել 1920-ականներին Հայաստանում տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային այն քաղաքականությունների հաստատումը, որոնք մեծապես հաշվի էին առնում երկրի տեղական առանձնահատկությունները:

---

[22] Տե՛ս «Ընկ. Մեասնիկեանի ճառը», *Կարմիր աստղ*, 28 մայիսի 1921 թ.:

[23] Մինչ քաղաքացիական կռիվները՝ դեռևս 1920 թվականի դեկտեմբերին, Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը Երևանի կուսակցական ժողովում իր զեկուցման մեջ շեշտում էր գյուղացիության ու մանր բուրժուազիայի նկատմամբ մեղմ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության, ինչպես նաև Ռուսաստանի և Ադրբեջանի փորձից խուսափելու կարևորության մասին: Սակայն Նոր տնտեսական քաղաքականությամբ է, որ այս մոտեցումը դառնում է պաշտոնական ղեկավարության որդեգրած քաղաքական գիծը: Տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.*, էջ 19-20: Ռուսաստանում սոցիալիզմին անցնելու համար երկարատև ժամանակի և դրա հաղթանակի համար սերնդափոխության անհրաժեշտության մասին դեռ 1917 թվականին շեշտում էին Լենինին հակադիր մարքսիստական գրեթե բոլոր ուժերը: Պատմաբան Նիկոլա Վերտը ՆԷՊ-ի ներդրման առաջին հետևանքներից մեկը համարում է մենշևիկների վերջնական ոչնչացումը ոչ թե ընդունված չափանիշների դեմ հնարավոր դիմադրության հանդեպ վախի պատճառով, այլ որ մենշևիկներն իրադրության վերլուծությամբ ապացուցել էին իրենց կանխորոշումների ճշմարտացիությունը և արդեն վաղուց է, որ պահանջում էին նման քաղաքականություն: Տե՛ս Николай Верт, *История Советского государства*. 1900-1991 (Москва: Весь Мир, 2002), էջ 159-160:

[24] Վերջիններիս շարքերում զգալի թիվ էին կազմում դաշնակցական ու սպեցիֆիկյան (Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության) հենք ունեցողները: Այս մասին տե՛ս Վարդան Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղեվն». Աշոտ Հովհաննիսյանի ավարտաճառը և նրա գործուն պատմագիտությունը», ըստ՝ Աշոտ Հովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը Israel Ory und die armenische Befreiungsidee* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2016), էջ 605-606:

Հայաստանը՝ գյուղատնտեսական երկիր

Հայաստանի կոմունիստական կուսակցության չորրորդ համագումարի իր զեկուցման մեջ առողջապահության ժողկոմ Սաքո Համբարձումյանը նշում էր.

> Ընկերներ, Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունն աշխատում ե մի այնպիսի միջավայրում, վորտեղ նա, պահպանելով հանդերձ կոմունիստական կուսակցության տակտիկայի, ծրագրի հիմնական սկզբունքները, պետք ե հաշվի առնի միաժամանակ գոյություն ունեցող բոլոր առանձնահատկությունները .... Առաջին առանձնահատկությունը հետևյալն ե. Հայաստանը գերազանցորեն գյուղացիական յերկիր ե. և՛ քանակի, և՛ եկոնոմիկայի տեսակետից գյուղացիությունը գերազանցում ե բանվոր դասակարգին:[25]

Այսպիսով Հայաստանում արդյունաբերությունը թույլ էր զարգացած, ընդհանուր առմամբ գերիշխում էր մանր ու միջին արտադրությունը, կապիտալիզմի անհամաչափ զարգացման հետևանքով երկրի արդյունաբերության որոշ ճյուղեր մնում էին տնային արդյունագործության մակարդակի վրա:[26] *Խորհրդային Հայաստանի* 1922 թվականի համարներից մեկում կարդում ենք, որ Հայաստանի «ազգաբնակութեան ոչ միայն ամենագերակշիռ տոկոսն է (մօտ 90 տոկոս) զբաղւում գիւղատնտեսութեամբ, այլև նրանով անուղղակի կերպով ապրում են համարեա ամենքը»:[27]

Գյուղացին, իր հերթին, նիստուկացով ու կենցաղավարությամբ հետամնաց էր, մտածելակերպով՝ պահպանողական, ինչը մեծապես խոչընդոտում էր արդի գյուղատնտեսության և կենցաղավարության առավել զարգացած եղանակների մշակմանը: 1920-ականների սկզբի հայկական գյուղերի վիճակի մասին Ապարանի գյուղերից մեկի օրինակով պատկերացում է տալիս *Խորհրդային Հայաստան* թերթում տպագրված Մ. Բագրատունու «Նամակ քսենոփոնյան գյուղերից» վերնագրով հոդվածը: Այն, թեև հեգնականորեն, երևան է հանում աղքատության ու տգիտության մեջ պարփակված գյուղի տխուր, միաժամանակ արտահայտիչ պատկերը: Այստեղ, Բագրատունին, նկարագրելով գյուղացիության կենցաղավարության ու տնտեսության հետամնաց վիճակը, այն ուղղակիորեն կապում է գյուղացու «մտավոր զարգացման» հետ.

> Գյուղացիության մտավոր զարգացման աստիճանը վորոշում ե նրա կյանքի, կենցաղավարության, տնտեսության հետամնաց վիճակը.... Մտավոր այդ պաշարով, բնական ե Աբարանի գյուղացիությունը ներկա կուլտուրայի հաղթանակող դարաշրջանում դժվար թե կարողանար ստեղծել տնտեսական բարոր վիճակ: Բայց ի՞նչ ասել ե բարոր վիճակ, յերբ կուլտուրապես հետամնաց և կավե դարում ապրող ժողովուրդը գաղափար անգամ չունի մարդկային ապրուստի

---

[25] «Հայաստանի կոմկուսակցության չորրորդ համագումարը. Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը (ընկ. Համբարձումյանի զեկուցումը)», *Խորհրդային Հայաստան*, 4 դեկտեմբերի 1925 թ.: Տեղական պայմանների հետ կապված արտադրության ձևերին զարկ տալը ինչ-որ իմաստով նաև Անդրկովկասի կոմունիստներին ուղղված Լենինի հորդորն էր. «Միանգամից ձգտել բարելավել[ու] գյուղացիության դրությունը և սկսել էլեկտրիֆիկացման, ոռոգման խոշոր աշխատանքները: Ոռոգումն ամենից անհրաժեշտն է և ամենից շատը կվերափոխի երկիրը, կվերածնի այն, կթաղի անցյալն ու կամրապնդի սոցիալիզմին անցումը»: Տե՛ս Ленин, *Полное собрание сочинений*, հ. 43, էջ 200:

[26] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ.6 (Երևան: ՀՍՍՀ ԳԱ, 1981), էջ 311: 20-րդ դարասկզբի Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության մասին տե՛ս նաև *Հայոց պատմություն*, հ. 3, գիրք 2 (Երևան: Զանգակ, 2015), էջ 3-10:

[27] Տ., «Գիւղատնտեսական յատուկ մամուլ ունենալու մասին», *Խորհրդային Հայաստան*, 10 մարտի 1922 թ.:

> տարրական ճաշակից, յերբ քաղաքակիրթ ժողովուրդների կենցաղավարական ձևերն ու լուսավոր կյանքը նրա համար անհասկանալի առեղծված են:[28]

Այսպես սոցիալիստական կարգերի հաստատումը տնտեսապես հետամնաց, մշակութայնորեն թերզարգացած, աղքատ գյուղացիական երկրում առիթ էր տալիս հեղափոխության և տեղական պայմանների միջև հիմնարար լարման: Մյասնիկյանի ձևակերպմամբ խնդիրը հետևյալն էր՝ «ի՞նչպես ե վոր գյուղացիական յերկրում պրոլետարական դիկտատուրա գոյություն ունի»:[29] Խորհրդային կարգերի հաստատումը մշակութայնորեն ոչ բավականաչափ զարգացած երկրում և դրանից բխող խնդիրները, սակայն, ոչ միայն հայաստանյան, այլև նոր խորհրդայնացած մյուս երկրների քաղաքական օրակարգում էին: Ռուսաստանում քաղաքական հեղափոխությունից հետո այս խնդիրն էր արձանագրում Լենինը 1921 թվականին.

> Այժմ մեր առաջ կուլտուրական խնդիրներ են կանգնած, այն քաղաքական փորձը մարսելու խնդիրները, որը պետք է և կարող է կենսագործվել: Կա՛մ Սովետական իշխանության բոլոր քաղաքական նվաճումների կործանում, կա՛մ նրանց տնտեսական պատվանդանի ստեղծում:[30]

Քաղաքական նախագծի և տեղական պայմանների միջև այս լարումը հնարավորինս մեղմելու համար խորհրդային իշխանությունն ամեն ջանք պետք է գործադրեր, որ իր քաղաքականություններով իր իսկ դեմ չհաներ երկրի մշակութային ու սոցիալական հենքը կազմող գյուղացիությանը: Այսուհետ ՆԷՊ-ի հիմնարար սկզբունքը կազմող գյուղացիության հետ կնքելիք «համաձայնությունն» էր դառնում երկրի տնտեսական զարգացման և հեղափոխության հաջողության հնարավոր երաշխիքը: Եվ եթե մի կողմից այդ քաղաքականությամբ խորհրդային իշխանությունը շահում էր գյուղացիության համակրանքը, ապա մյուս կողմից՝ վտանգավոր կախման մեջ էր հայտնվում մշակութային ու դասակարգային ախոյանից:[31]

Գյուղացիական Հայաստանի ստեղծագործական հմայքը

1920-ական թվականներին երկրի առջև ծառացած դժվարին մարտահրավերների այս համատեքստում Հայաստանի խորհրդային իշխանության համար առանցքային է դառնում նախընթաց շրջանից ժառանգված այն ռեսուրսների օգտագործումը, որոնք իրենց նպաստը կարող էին բերել երկրի տնտեսական, սոցիալական ու մշակութային վերելքին:

---

[28] Մ. Բագրատունի, «Նամակ քսենոփոնյան գյուղերից», *Խորհրդային Հայաստան*, 13 հոկտեմբերի 1923 թ.:
[29] Ալեքսանդր Մարտունի, *Խորհրդային Հայաստանի ուղին* (Թիֆլիզ: Պետհրատ, 1924), էջ 39:
[30] Տե՛ս *Լենինը կուլտուրայի և արվեստի մասին* (Երևան: Հայպետհրատ, 1958), էջ 408: Նիկոլա Վերտը, հակադարձելով խորհրդային որոշ պատմաբանների այն պնդմանը, թե Ռուսաստանում ճորտատիրական հարաբերությունների վերացումը առաջ բերեց կապիտալիզմի արագ զարգացում գյուղերում, գրում է. «Իրականում, եթե ուշադրության առնենք այն պայմանները, որոնցում ոչնչացան ճորտատիրական հարաբերությունները, դրանց վերացումը ոչ այնքան նպաստեց կապիտալիզմի զարգացմանը, որքան պահպանեց արխայիկ, կարելի է ասել, ֆեոդալական տնտեսական կառուցվածքը»: Տե՛ս Верт, *История Советского государства. 1900-1991*, էջ 14:
[31] Այս առումով հատկանշական է նաև Ռուսաստանի կոմունիստական կուսակցության 2-րդ համագումարում Լենինի եզրափակիչ ելույթը: Լենինը սոցիալիստական երկրում գյուղացիությանը մեծ արտոնություններ ընձեռող ՆԷՊ-ի ներդրումը դիտարկում էր իբրև երկրի «թուլություններին» ընդառաջ գնալու և դրանք արիաբար ընդունելու քաղաքականություն. «Ոչ մի լուրջ առարկութիւն չարուեց այն բանի դէմ, թէ հարկաւոր էր անցնել տնտեսական նոր քաղաքականութեան: Պրոլետարիատը չի վախենում խոստովանել, որ նրան ինչ որ բան չ(յ)աջողուեց: Այն բոլոր յեղափոխական կուսակցութիւնները, որոնք մինչև օրս խորտակւել են, խորտակւել են հենց այն պատճառով, որ իրենց չեն ճանաչել, չեն կարողացել իմանալ, թէ ինչումն է կայանում իրենց ոյժը և վախեցել են խօսել իրենց թուլութեան մասին: Իսկ մենք չխորտակւեցինք, որովհետև չենք վախենում խօսել մեր թուլութիւնների մասին և կարողանում ենք յաղթել մարդկային այդ թուլութիւնը»: Տե՛ս «Ռուսաստանի Կոմ. կուսակ. XI համագումարը. ընկ. Լենինի եզրափակման ճառը», *Կարմիր աստղ*, 4 ապրիլի 1922 թ.:

Այս համատեքստում է նաև, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը պաշտոնապես Հայաստան էր հրավիրում արվեստի ու մշակույթի այն գործիչներին, ովքեր, թեկուզ գաղափարապես խորթ կոմունիստական հայացքներին, պատրաստ էին համագործակցել խորհրդային իշխանության հետ և իրենց մտավոր ներուժը ներդնել ավերված երկրի շինարարության գործում:[32] Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պրոլետարիատն ու իր կուսակցությունը անհաշտ կռիվ են մղում հարստահարող դասակարգերի շահերը պաշտպանող ամեն կարգի կուսակցական մտավորականության դեմ, Հովհաննիսյանը, այնուամենայնիվ, նկատում է.

> Վորքան պրոլետարիատը կամ նրա կուսակցությունը նվաճում ե իշխանություն, կազմակերպում ե իշխանության նոր ապարատ, նա ձգտում է միաժամանակ ոգտագործել նաև հին, փշրված ապարատի բաղադրիչ մասերը, աշխատում ե ստորադրել նրանց իր նպատակներին, նրանց միջոցով կազմակերպել պրոլետարական պետականությունն ու հասարակայնությունը:[33]

Նախընթաց շրջանի մտավորականության ներգրավումը պրոլետարական պետականության կայացման գործընթացներում, սակայն, պետք է դիտարկել ոչ միայն հայաստանյան, այլև Ռուսաստանի կոմունիստական կուսակցության որդեգրած քաղաքականությունների ընդհանուր ուղեծրում: Դեռ 1919-ին Ռուսաստանում ստեղծված արտաքին և ներքին քաղաքական իրադրության պայմաններում այս հանգամանքն է շեշտում Լենինը՝ միաժամանակ անհիմն համարելով այն մտայնությունը, թե հնարավոր է կոմունիստական հասարակարգ կառուցել միայն «մաքուր կոմունիստական ձեռքերով»՝ առանց օգտվելու «կոնտրռևոլուցիոն բուրժուական կոոպերատորներից».[34]

> Մենք այլ նյութ չունենք: Մենք ցանկանում ենք անմիջապես սոցիալիզմ կառուցել այն նյութից, որ երեկվանից այսօր, հենց այժմ մեզ թողել է կապիտալիզմը, այլ ոչ թե այն մարդկանցից, որոնք ջերմոցներում կպատրաստվեն, եթե զվարճանանք այդ առակով: Մենք ունենք բուրժուական մասնագետներ և ոչինչ ավելի չունենք: Մենք ուրիշ աղյուսներ չունենք, մենք կառուցելու համար բան չունենք:[35]

Հասկանալի է, սակայն, որ խորհրդայնացման սկզբնաշրջանում որևէ կերպ չէին բարելավվել Հայաստանի տնտեսական, հասարակական ու մշակութային այն պայմանները, որոնք պարարտ հող կարող էին հանդիսանալ արվեստի ու մշակույթի գործիչների ստեղծագործական աշխատանքի համար: Երկիրը դեռ առերեսվում էր որբերի խնամքի, գաղթականության, պարենավորման և առողջապահական՝ առաջին անհրաժեշտության խնդիրների հետ: Դրան եթե գումարենք նաև Հայաստանի բնակարանային սուր ճգնաժամը, պարզ կլինի, թե կենցաղային ինչպիսի պայմանների

---

[32] Մտավորականության հայրենադարձության գաղափարը և այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը Հայաստանի համատեքստում նոր չէին: 1918-1920 թվականների հայկական մամուլը դիտարկելիս պարզ է դառնում, որ մշակույթի գործիչներին Հայաստան հրավիրելու և պետության կազմավորման գործընթացներում նրանց ներգրավելու քաղաքականությունն առանցքային էր նաև Առաջին հանրապետության տարիներին: Տե՛ս օրինակ՝ Յ. Պարսամեան, «Մտաւորականները դէպի Հայաստան», *Աշխատանք*, 22 հուլիսի 1919 թ.; «Բայց ո՞վ է մեղաւոր», *Մշակ*, 8 հուլիսի 1920 թ.:

[33] Աշոտ Հովհաննիսյան, *Պրոլետարական հեղափոխությունը յեւ ուսուցչությունը* (Երևան: Պետհրատ, 1925), էջ 4-5:

[34] Ռուսաստանում մշակութային ժառանգության խնդիրների և նոր պետականության պայմաններում մտավորականության հանդեպ վերաբերմունքի մասին տե՛ս՝ Katerina Clark, Evgeny Dobrenko (խմբ.), *Soviet Culture and Power: A History in Documents, 1917-1953* (New Haven, London: Yale University Press, 2007), էջ 3-49:

[35] *Լենինը կուլտուրայի և արվեստի մասին*, էջ 299:

պետք է առերեսվեին Հայաստան վերադարձող գործիչները:[36] Մարտիրոս Սարյանը, որ խորհրդային իշխանության հրավերով Հայաստանում հաստատված առաջին արվեստագետներից էր, 1921 թվականին Երվանդ Շահազիզին ուղղված մի նամակում գրում է. «Բնակարանի հարցը այստեղ շատ սուր անլուծելի է, բոլոր եկողները մնում են առանց բնակարանի, բացի նրանցից, որոնք ունեն այստեղ կամ ծանոթներ, կամ ազգականներ»:[37]

Հետաքրքրական է, ուրեմն, 1920-ականների գաղափարական և ստեղծագործական այն մթնոլորտը, որը, չնայած իր ծանր պայմաններին, գրավեց և հայ մշակույթի գործիչներից շատերի (ինչպես օրինակ՝ Հակոբ Կոջոյանի, Մարտիրոս Սարյանի, Լեոյի, Ալեքսանդր Թամանյանի և այլոց) համար Հայաստանում հաստատվելու հիմնային գործոն դարձավ:[38] Այսպիսով մի կողմից Հայաստանը ազգային գետնի վրա համաշխարհային պրոլետարական պայքարի հենակետ էր: Հովհաննիսյանի իսկ բնորոշմամբ՝ «Խորհրդային Միության սահմաններում մեր կատարած աշխատանքը համաշխարհային մասշտաբով մղած մեր պայքարի կարևոր մի մասն ե միայն»:[39] Մյուս կողմից՝ 1920-ականներն իրական հետևողական աշխատանքով պետություն կառուցելու տասնամյակ էին ոչ միայն պետական գործիչների, այլև մշակույթի և արվեստի ներկայացուցիչների համար: 1920-ականներին արվեստն ու մշակույթը ներկայանում էին որպես պետության կայացմանն ուղղված գործուն ոլորտներ: Ուստի՝ արվեստագետներն ու մտավորականներն իրենց տեսնում էին իբրև այդ նոր պետության՝ իրենց իսկ հայրենիքի կառուցմանը կոչված գործիչներ, ինչն էլ նրանց ոգեշնչում և հնարավոր էր դարձնում կազմակերպելու գեղարվեստական և մշակութային կյանքը Խորհրդային Հայաստանում այն ժամանակ, երբ երկիրը դեռ գտնվում էր ստեղծագործական գործունեության համար անբարենպաստ պայմաններում: Սարյանը գրում է.

> Մի րոպե պատկերացրեք, թե ինչի էր նմանվում այս գյուղաքաղաքը, երբ նրա նեղլիկ փողոցներով կողք-կողքի քայլում, իրար հետ զրուցում, ծրագրեր էին մշակում ու նրա տնակներում ժրաջան մեղուների պես օրավուր աշխատում Աճառյանը, Սպենդիարյանը, Մալխասյանցը, Մանանդյանը, Չարենցը, Կոջոյանը:[40]

---

[36] Դեռ 1919 թվականին Գարեգին Լևոնյանն, անդրադառնալով Հայաստանի մշակութային կյանքի զարգացման համար անհրաժեշտ նախապայմաններին, կառավարության հատուկ ուշադրությունն էր հրավիրում մշակույթի գործիչների համար կենցաղային տարրական պայմանների ստեղծման կարևորությանը: Նա գրում է. «Ոչ մի ազգի մէջ մտաւոր կուլտուրական կեանքը չէ կարող առաջադիմել, ծաղկել, եթէ նոյն այդ կուլտուրային ծառայող մարդիկ տնտեսապէս ապահովված չեն.... Բարձրացրէք մտքի մշակների տնտեսական դրութիւնը, բարւոքեցէք նրանց վիճակը և նրանք կը բարձրացնեն ազգային կուլտուրական կեանքը. մի կեանք, որ լուսաւոր ազգերի առաջ աւելի արժանաւոր կը կարողանանք ցուցադրել, քան մեր զինուորական ոյժերի քանակը, քան մեր երկրի արդիւնաբերութիւնը: Տե՛ս Գ. Լեւոնեան, «Կուլտուրական գործունէութիւն Հայաստանում», *Մշակ*, 16 մարտի 1919 թ.:

[37] Մարտիրոս Սարյան, *Նամակներ*, հ. 1 (Երևան: Տիգրան Մեծ, 2002), էջ 223: Այս առումով հետաքրքրական է նաև Մարտիրոս Սարյանի մեկ այլ նամակ՝ ուղղված արդեն Վենետիկում բնակվող իր ընկերոջը՝ Ավետիք Իսահակյանին: Թեև նկարիչն իր մի շարք նամակներում գրողի՝ Հայաստան վերադառնալու խորին ցանկությունն էր հայտնում, միաժամանակ դրան զուգահեռ նկարագրում էր Հայաստանում տիրող կենցաղային ծանր պայմանները: Թե որքան անհնարին էր Հայաստանում «սենյակ ճարելը», Սարյանն ընկերոջը պարզաբանում էր Դերենիկ Դեմիրճյանի օրինակով, երբ վերջինս Երևան էր եկել՝ այնտեղ հաստատվելու նպատակով, բայց սենյակ չճարելու պատճառով, ստիպված վերադարձել էր ետ՝ Թիֆլիս: Տե՛ս Սարյան, *Նամակներ*, էջ 275-276:

[38] Հայաստան էին հրավիրվում ինչպես խորհրդային կարգերին համակրող ուժերը, այնպես էլ հեղափոխության «ուղեկիցները»: 1920-ականների սկզբներից «ուղեկից» սկսեցին անվանվել հեղափոխության կողքին կանգնած և քաղաքական հովանավորության տակ գործող ավագ սերնդի այն արվեստագետներն ու գրողները, որոնք պատրաստ էին համագործակցել խորհրդային իշխանության հետ՝ առանց կուսակցության անդամ լինելու անհրաժեշտության:

[39] Աշոտ Հովհաննիսյան, *Մեր պայքարը, նվաճումները յեվ անելիքը* (Երևան: Պետհրատ, 1925), էջ 6:

[40] Մարտիրոս Սարյան, *Գրառումներ իմ կյանքից* (Երևան: Հայաստան, 1966), էջ 189:

Գլուխ 2. Խորհրդային Հայաստանի լուսավորական քաղաքականության մարտահրավերները 1920-ականների առաջին կեսին

Կրթությունը 1920-ականներին

1923 թվականին գրված «Կոոպերացիայի մասին» հոդվածում Լենինը մշակութային հեղափոխությունն էր համարում սոցիալիստական երկիր կառուցելու գլխավոր նախապայման: Այստեղ Լենինն անդրադառնում է հակառակորդների քննադատությանը, ըստ որի՝ ցնորամիտ գործ էր սոցիալիզմի ներդրումը մշակութայնորեն ոչ բավականաչափ զարգացած երկրում: Հակադարձելով այն պնդմանը, թե մեծամասնականները սխալվել են, որ սկսել են ոչ այն ծայրից, ինչպես ենթադրվում էր տեսականորեն (այսինքն՝ քաղաքական ու սոցիալական հեղաշրջումը նախորդել էր մշակութային հեղաշրջմանը), Լենինը գրում է.

> Մեզ համար այժմ այդ կուլտուրական հեղափոխությունը բավական է, որպեսզի մեր երկիրը լիովին սոցիալիստական երկիր դառնա, բայց այդ կուլտուրական հեղափոխությունը մեզ համար ունի անչափ մեծ դժվարություններ՝ թե՛ զուտ կուլտուրական կարգի դժվարություններ (որովհետև մենք անգրագետ ենք), և թե՛ նյութական կարգի դժվարություններ (որովհետև կուլտուրական լինելու համար հարկավոր է արտադրության նյութական միջոցների որոշ զարգացում, հարկավոր է նյութական որոշ բազա):[41]

Կանանց ազատագրման, եկեղեցին պետությունից անջատելու, նոր կենցաղի հաստատման խնդիրների հետ մեկտեղ՝ 1920-ականներին մշակութային հեղափոխության կարևոր երեսակներից էր նաև զանգվածային անգրագիտության վերացումն ու ժողովրդի համատարած լուսավորությունը:[42] «Ռազմական կոմունիզմի» փոխարինումը տեղական կարիքները հաշվի առնող Նոր տնտեսական քաղաքականությամբ ուղենշային դարձավ նաև լուսավորության ոլորտում կուսակցության կողմնորոշման հարցում: ՆԷՊ-ով սկսված սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում իբրև «պատուհաս» դիտարկվող գյուղացու անգրագիտությունը Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի համար առաջնային էր դարձնում մի շարք միջոցառումների ձեռնարկումը: Դրանք մի կողմից պետք է բարձրացնեին գյուղացու սոցիալական դրությունը, մյուս կողմից՝ նպաստեին «ամենաստորին նահապետական աստիճանի վրա կանգնած»[43] գյուղատնտեսության արդիականացմանը:[44] Այս խնդիրը հստակորեն ձևակերպում է 1923 թվականին լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնը ստանձնած Ասքանազ Մռավյանը

---

[41] Վլադիմիր Լենին, «Կոոպերացիայի մասին», ըստ՝ *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 45 (Երևան: Հայաստան, 1983), էջ 446:

[42] ՆԷՊ-ի շրջանում հասարակական նոր հարաբերությունների հիմքը հանդիսացող նոր կենցաղի հաստատման ու դրանում արվեստի կատարելիք դերակատարությունն է հանգամանալից քննարկում Իրինա Շահնազարյանն իր «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև. կենցաղի ու արվեստի արդիականացման փորձը 1920-ականների առաջին կեսին» հետազոտության մեջ: Տե՛ս *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, ըստ՝ https://bit.ly/3Qc72Ay, այց՝ 12 դեկտեմբերի 2022 թ.:

[43] Տե՛ս «Երեւանի համալսարանի գիւղատնտեսական ֆակուլտէտը», *Խորհրդային Հայաստան*, 4 փետրվարի 1922 թ.:

[44] Գյուղացու անգրագիտությունն իբրև «կրկնակի պատուհաս» է դիտարկում Ալեքսանդր Մյասնիկյանն իր «Յեռամյա սոցիալիստական Հայաստանի առորյա խնդիրները» զեկույցում: Մյասնիկյանի կարծիքով գյուղացու անգրագիտությունը «կրկնակի պատուհաս» է, քանի որ դրանից է բխում գյուղացու տնտեսական վիճակով «անշարժ, պահպանողական ու բթացած» լինելը: Տե՛ս Մարտունի, *Խորհրդային Հայաստանի ուղին*, էջ 34:

1924 թվականին կայացած ուսուցչության համահայաստանյան անդրանիկ համագումարի իր զեկույցում.

> Գյուղատնտեսության և արդյունաբերության վերականգնման այս պրոցեսը պահանջում է, վոր մեր յերկրի աշխատավորների կուլտուրական մակարդակը լինի բարձր: Պահանջվում է, վոր Հայաստանի բանվորներն ու գյուղացիները չլինեն յերեկվա խավար, նախապաշարված և պահպանողական մարդիկ, այլ վորակյալ բանվորներ ու գյուղացիներ, վորոնք կարողանան սեպարատորի լեզուն հասկանալ ու աշխատել մեր գործարաններում, հանքերում և այդպիսով կուլտուրական տնտեսությունը առաջ տանել:[45]

Համագումարը կայանում էր հետնախորքում ունենալով 1920-1921 թվականներին Լենինի առաջադրած կրթության ծրագրային քաղաքականություններն ու գործնականում դրանց հարուցած բարդությունները: Կրթության շուրջ հարցերին Լենինն անդրադառնում է դեռևս 1920 թվականի հոկտեմբերին կայացած Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միության համառուսաստանյան 3-րդ նիստի իր զեկույցում: Այն, որ կրթությունն առաջնային էր տնտեսության վերականգնման ու կոմունիստական հասարակարգ կերտելու գործում, ինքնին հասկանալի էր: Հետաքրքրականը, սակայն, խորհրդային սոցիալիստական քաղաքականություններում կրթության ընբռնումն էր: Կրթության բնույթի շուրջ Լենինի դիրքորոշումներն ուրվագծվում են, երբ նա խոսում է խորհրդային կարգերում դպրոցի, ինչպես նաև երիտասարդության՝ կոմունիստական գիտելիքներ յուրացնելու խնդիրների մասին: Լենինի համոզմամբ՝ կոմունիզմ կերտելու համար պետք է «սովորել կոմունիզմ», սակայն կոմունիզմ սովորելու ինքնին ընդհանրական հասկացությունից էլ նա բխեցնում էր գլխավոր խնդիրը. «Այստեղ մեզ սպառնում են մի շարք վտանգներ, որոնք ամբողջությամբ ու ամենուրեք ի հայտ են գալիս, երբ կոմունիզմ սովորելը հասկացվում է սխալ կամ ընբռնվում շատ միակողմանիորեն»:[46] Այս ասելով Լենինը նկատի ուներ կոմունիստական աշխատություններից ու դասագրքերից ինքնանպատակ յուրացվող գիտելիքը, այնինչ ըստ Լենինի՝ կրթության՝ որպես պարզապես գիտելիքների պաշարի ընբռնումն առհասարակ հատուկ էր բուրժուական հասարակությանը, ինչի հետևանքով էլ առկա էր հենց գործնական կյանքի ու գիտելիքի միջև խզումը: Մինչդեռ, ըստ Լենինի, կրթությունը պետք է կապված լիներ առօրյա կյանքի ու աշխատանքի հետ՝ հիմքում ունենալով հասարակական վերափոխման հեռանկարներն ու այդ գործընթացներում վերափոխում ապրող մարդուն: Լենինը, կրթությունը հիմքում դասակարգային ընբռնելով հանդերձ, նշում էր, որ այժմ այն բուրժուազիային ծառայելու փոխարեն՝ պետք է կապվեր գյուղացու ու բանվորի անմիջական կարիքներին:[47]

Լենինյան այս դիրքորոշումները մեծապես արձագանք էին գտնում նաև խորհրդահայ ղեկավար գործիչների՝ կրթության և գիտության բնույթի շուրջ ընբռնումներում: Մռավյանը նկատում է.

> Բանվորա գյուղացիական մեր հանրապետության ապագան չենք կարող յերեվակայել առանց բանվորի ու գյուղացու աշխատանքների սերտ

---

[45] Տե՛ս «Ուսուցչական համահայաստանյան անդրանիկ համագումար. Ընկ. Ա. Մռավյանի ճառը», *Խորհրդային Հայաստան*, 27 դեկտեմբերի 1924 թ.: Ասքանազ Մռավյանը Խորհրդային Հայաստանի լուսժողկոմ է եղել 1923-1929 թվականներին:

[46] Ըստ՝ Н. К. Крупская (կազմ.), *Заветы Ленина в области народного просвещения* (Москва: Работник просвещения, 1924), էջ 8:

[47] Крупская, *Заветы Ленина в области народного просвещения*, էջ 8-12:

> դաշնակցության գիտության հետ: Գիտությունն ամբողջովին ծառայելու յե բանվորներին ու գյուղացիներին, նրանց հեղափոխությանը, նրանց ազատագրության գործին, նոր կյանքի հիմնավորմանը:[48]

Կոմունիստական հասարակարգ կերտելու գործում խորհրդային իշխանության՝ կրթությանը տված վճռորոշ նշանակությունը նկատի առնելով հանդերձ, հարկ է նշել, թե ինչպիսի դրության մեջ էր գտնվում կրթական համակարգը խորհրդայնացման սկզբնաշրջանի Հայաստանում: Այս մասին *Խորհրդային Հայաստան* թերթում կարդում ենք.

> Խորհրդային իշխանության հաստատման որը [sic!] Հայաստանում համարյա և վոչ մի դպրոց չեր գործում: Այլ կերպ ել լինել չեր կարող, քանի վոր տաճկական արշավանքի հետևանքով յերկրում տիրում եր ընդհանուր ժխոր և տակնուվրայություն. դասատուները և բարձր դասարանի աշակերտությունը զենքի տակ եյին մտած, դպրոցական շենքերը դարձել եյին զորանոցներ կամ ապաստարաններ Ղարսի, Սուրմալվի և Ալեքպոլի գավառի փախստական բնակչության համար: Խնդիրը սրանով չեր վերջանում. դպրոցական այն խղճուկ գույքը, ինչ վոր դեռ մնացել եր մինչ այդ տեղի ունեցող դեպքերից հետո, վառվում, վոչնչացվում եր:[49]

Խորհրդային առաջին տարիների կրթական դրությունը նման մռայլ գույներով էին պատկերում նաև այդ գործին լծված կուսակցական գործիչները: Խորհրդայնացումից մեկ տարի անց Խորհրդային Հայաստանի առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի գործունեությունը պարզաբանելիս նշում է.

> Դաշնակցական կառավարութիւնը մեզ ժառանգութիւն թողեց կիսաքանդ դպրոցական մի ցանց: Ամբողջ հանրապետութեան մէջ ոչ մի աշխատանք տարուած չի եղել ինչպէս նախադպրոցական դաստիարակութեան, նոյնպէս և արտադպրոցական կրթութեան շրջանում: Ժողովրդական զանգուածները պահուած են եղել խաւարի և տգիտութեան մէջ: Ամբողջ երկրում չեն եղել թատրոններ, ժողովրդական համալսարաններ, բանուորա-գիւղացիական ակումբներ, ժողովրդական գրադարաններ և ընթերցարաններ:
>
> Բազմաթիւ որբանոցները գտնուել են խնամատարական նախարարութեան հսկողութեան տակ, որը ոչ մի կապ չի պահպանել հանրային կրթութեան լուսաւորութեան հետ՝ հոգ չտանելով որբերի դաստիարակութեան մասին:[50]

---

[48] Տե՛ս «Հայաստանի Պետական համալսարանի 3-ամյա և բանֆակի միամյա տարեդարձի տոնակատարությունը. ընկեր Մռավյանի ճառը», *Խորհրդային Հայաստան*, 25 մարտի 1924 թ.:

[49] «Լուսավորության գործը Հայաստանում 1922-1923 ուսումնական տարում», *Խորհրդային Հայաստան*, 29 նոյեմբերի 1923 թ. (հավելված թիվ 267-ի):

[50] «Ժողովրդական լուսաւորութեան վիճակը Հայաստանում», *Կոմմունիստ* (Բաքու), 13 փետրվարի 1923 թ.: Անցյալի ժառանգության հանդեպ Հովհաննիսյանի՝ բացահայտ քաղաքական դիրքերից հնչող այս գնահատականը պետք է դիտել խորհրդային կարգերի հաստատումից հետո արտասահմանում ապաստանած դաշնակցական գործիչների և մեծամասնական ղեկավարության միջև 1920-ականներին հրապարակայնորեն ծավալվող քաղաքական սուր բանավեճերի համատեքստում: Մինչդեռ գործնականում մեծամասնական ղեկավարները, այդ թվում՝ Հովհաննիսյանն ինքը, ականջալուր էին անցյալից ժառանգություն մնացած կրթական ու մշակութային արժեքներին՝ պրոլետարական պետականության կայացումն առհասարակ անպատկերացնելի համարելով առանց այդ արժեքների յուրացման գործընթացի: Աշոտ Հովհաննիսյանը Խորհրդային Հայաստանի լուսժողկոմ է եղել 1920-1921 թվականներին: Վերջինիս այդ պաշտոնում փոխարինել է Պողոս Մակինցյանը 1921-1922 թվականներին: Այս մասին Թիֆլիսի *Կարմիր աստղում* նշվում էր

Խորհրդային Հայաստանում կրթական գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու նպատակով ընդունվում են մի շարք հրամաններ, որոնցից օրինակ՝ «ուսուցիչներին, աշակերտներին և ուսանողներին զինուորական ծառայութիւնից ազատելու», «դպրոցներում կրօնական առարկա դասաւանդելու արգելքի», «սովորողների գիտութեան չափը թւանշաններով արտահայտելու կարգի վերացման», «հոգեւոր դասին պատկանող անձանց դպրոցներում պաշտօնավարելու արգելանքի» մասին հրամանները:[51] Կրթությունն, անցնելով պետական հովանավորության տակ, առանձնացվում էր հայերի մշակութային ու կրթական կյանքում նշանակալից դերակատարում ունեցած եկեղեցուց: Պետական մակարդակով քարոզվող հակակրոնականությունը և «բնագիտական» ու աշխարհիկ կրթությունը մի կողմից պետք է նպաստեին կրոնական հավատալիքներից ժողովրդի ձերբազատմանը, մյուս կողմից՝ տնտեսության արդիականացմանը: 1922 թվականին ընդունված Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրությամբ ամրագրվում էր հետևյալը.

> Աշխատաւորների քաղաքացիական դաստիարակութեան, մտաւոր-բարոյական ազատագրութեան և դասակարգային կազմակերպութեան նպատակով՝ ա. եկեղեցին անջատւում է պետութիւնից, վերածւելով հաւատացեալների մասնաւոր համայնքի, և դպրոցը եկեղեցուց: Բոլոր քաղաքացիներին իրաւունք է տրւում ազատօրէն վարել կրօնական և հակակրօնական պրոպագանդ: Դպրոցը դառնում է սոցիալիստական դաստիարակութեան օրգան՝ կիրառելով արտադրական աշխատանքը որպէս կրթութեան միջոց:[52]

Ամրագրված կետերով Խորհրդային Հայաստանի կառավարությունը մտադիր էր նախ և առաջ ժառանգված կրթական համակարգը վերափոխել: Բնույթով «նեղ», «սերտողական», «վարժոցային» կամ «ծխական-ազգայնական» որակվող նախկին դպրոցների տեղը պետք է բռնեին նոր՝ «կյանքի հետ կապված» աշխատանքային դպրոցները:[53] Սա ենթադրում էր, որ դպրոցներում դասավանդվող գիտելիքը պետք է օգներ աշակերտին գործնականում կիրառելու դրանք ի նպաստ պետության վերականգնմանը, ուստի 1920-ականների սկզբնական շրջանում հանրակրթական ուսուցումը մեծ իմաստով գործնակա՛ն ուսուցում էր: Մի երկրում, որտեղ դեռևս այժմեական էին սովի, հիվանդությունների, մահացության, տնտեսական ճգնաժամի խնդիրները, հրատապ էր դառնում դրանք հաղթահարելու ունակ համապատասխան մասնագետների պատրաստումը: Այդ իսկ պատճառով դպրոցներում շեշտը դրվում էր հատկապես արտադրական՝ գյուղատնտեսական ու արդյունագործական գիտելիքների, արհեստների, ինչպես նաև դպրոցների համար ուսուցիչների պատրաստման վրա: Այդպիսով Խորհրդային Հայաստանի կառավարությունը մտադիր էր նախ՝ ընդառաջ գնալ տեղի հասարակական-տնտեսական առաջնահերթ կարիքներին, և երկրորդ՝ սոցիալապես

հետևյալը. «Նախկին Լուսժողկոմը. Աշոտ Յովհանիսեանը հրաժարւել է այդ պաշտօնից յատկապէս իր պատմական ընդարձակ ուսումնասիրութիւնները, դեռ Մոսկւայում սկսած, կարգի բերելու և լրացնելու համար»: Տե՛ս «Խորհրդային երկրներ. Հայաստան», *Կարմիր աստղ*, 19 նոյեմբերի 1921 թ.:

[51] *Հ.Ս.Խ.Հ. դեկրետների և հրամանների ժողովածու* (Էջմիածին: Պետհրատ, 1921), պրակ 1, էջ 14, 43-44:

[52] *Հ.Խ.Ս.Հ. դեկրետների և որոշումների հավաքածու*, 1922, թիվ 8, էջ 58:

[53] Նախկին կրթական համակարգը վերափոխելու, նոր՝ աշխատանքային դպրոցներ ստեղծելու և այդ ճանապարհին հարուցված բարդությունների մասին տե՛ս օրինակ՝ «Աշխատանքի դպրոցի կիրառումը», *Խորհրդային Հայաստան,* 1 հուլիսի 1923 թ.; «Ժողովրդական լուսավորության հերթական խնդիրը», *Խորհրդային Հայաստան,* 4 մարտի 1923 թ.; Ս. Աբովյան, «Պրոֆեսիոնալ-տեխնիքական կրթության գործը Հայաստանում», *Խորհրդային Հայաստան,* 4 մարտի 1923 թ.; Սուր. Նազանյան, «Փորձնական աշխատանքային սոցիալիստական դպրոցներ», *Խորհրդային Հայաստան,* 25 մարտի 1923 թ.; Նորայր, «Աշխատանքային դպրոցները նոր պայմաններում», *Կարմիր աստղ*, 11 ապրիլի 1922 թ.:

ապահովել «հասարակական ամենաճնշող աղետ» դիտարկվող հազարավոր որբերին:[54] Գործնական գիտելիքների ուսուցմամբ մի կողմից որբերն իրենք իսկ ապահովված կլինեին ինքնուրույն աշխատանքով ու մասնագիտությամբ, մյուս կողմից՝ կնպաստեին ավերակ պետության վերաշինման գործընթացներին: Այսպես որբերի մի սերունդ պետք է փոխարիներ նախորդած պատերազմի, սովի ու ազգային աղետի արդյունքում կորսված սերնդին.

> Ամենից առաջ գործը պետք ե դրվի պրակտիկ հողի վրա: Հետևապես թե դպրոցներում և թե արհեստանոցներում մի կողմից պետք ե ծանրանալ վոչ այնքան տեսականի՝ վորքան գործնականի վրա, մյուս կողմից՝ ուշադրության պետք ե առնել գյուղատնտեսության ճյուղերը և արհեստների այն տեսակները, վորոնք ամենից անհրաժեշտ և նպատակահարմարն են սաներին թե լայն չափով մեր յերկրի շինարարական աշխատանքներին մասնակից անելու և թե որ [sic!] առաջ նրանց ինքնուրույն աշխատանքի մեջ դնելու համար:[55]

Կրթության «հրամայական պահանջը» և «լավ օրերի հույսով» ապրող դպրոցները

Կրթության բնագավառում կառավարության անելիքները բազմաթիվ էին՝ պետական որբանոցները Լուսժողկոմատի իրավասությանը հանձնելու խնդիրները, լուսավորության գործի համար անհրաժեշտ «նյութական բազայի» ստեղծումը, նախադպրոցական կրթությունը, դպրոցական ցանցերի ընդլայնումն ու շենքերի վերանորոգումը, ուսուցիչների վերապատրաստման համար «հատուկ ամառային կուրսերի», արհեստագիտական-տեխնիկական դասընթացների կազմակերպումը, դպրոցական նոր դասագրքերի ու ձեռնարկների, աշխատանքային գործիքների, գրենական պիտույքների,

---

[54] «Լուսաւորութեան գործը», *Խորհրդային Հայաստան*, 2 փետրվարի 1922 թ.: 1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանի կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը որբերի դաստիարակության ու կրթության հարցն էր, որն ուղղակիորեն շաղկապվում էր պետության հասարակական, տնտեսական, քաղաքական ու մշակութային կարիքներին: Պատահական չէ, որ Մյասնիկյանը նշում էր, որ որբերը «մեր հույսն են, մեր պետության հիմքերից մեկը», տե՛ս Մարտունի, *Խորհրդային Հայաստանի ուղին*, էջ 45: Որբերի կրթության խնդիրների մասին պետականության կայացման համատեքստում տե՛ս օրինակ՝ Ասքանազ Մռավյան, «Նոր խնդիրների առաջ», *Խորհրդային Հայաստան*, 29 նոյեմբերի 1923 թ.; Ա. Մռավյան, «Վորբերի դաստիարակության խնդիրը», *Խորհրդային Հայաստան*, 8 հուլիսի 1923 թ.; Ս. Աբով, «Վորբերի ապագան», *Խորհրդային Հայաստան*, 8 հուլիսի 1923 թ.: Մյասնիկյանի կառավարության որբախնամ քաղաքականությունների մասին տե՛ս Նորա Ն. Ներսեսյան, *Որբաքաղաքը. Նպաստամատույց աշխատողներ, կոմիսարներ և «նոր Հայաստանը կառուցողներ». Ալեքսանդրապոլ/Լենինական, 1919-1931* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2018), էջ 119-157, տե՛ս նաև «Կոմունիստական յերիտասարդությունն ու վորբերի դաստիարակությունը», ըստ՝ Մարտունի, *Խորհրդային Հայաստանի ուղին*, էջ 41-45: Որբերի խնամքի ու կրթության գործում առանցքային էր ներկայիս Գյումրիում 1919-1931 թվականներին տեղակայված ամերիկյան որբախնամ կազմակերպության՝ Մերձավորարևելյան նպաստի (ՄԱՆ) դերակատարությունը: ՄԱՆ-ի դպրոցներում տարվող կրթական ծրագրերի վերաբերյալ տե՛ս Ներսեսյան, *Որբաքաղաքը*, էջ 221-267: Այս առումով հատկանշական է նաև ՄԱՆ-ի և Խորհրդային Հայաստանի կառավարության միջև 1923 թվականի փետրվարի 10-ին Թիֆլիսում ստորագրված մանդատը: Ըստ այդ մանդատի՝ որբերի կրթությունն ու դաստիարակությունը պետք է կատարվեր Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի վերահսկողությամբ, ՄԱՆ-ի դպրոցների ու մանկապարտեզների ուսումնական բոլոր ծրագրերը պետք է համապատասխանեին պետական որբանոցների ծրագրերին: ՄԱՆ-ը պարտավորվում էր որբերին տրվող կրթությամբ նպաստել մոտ ապագայում երիտասարդ, խորհրդային, սոցիալիստ քաղաքացիներ կերտելու գործին: Տե՛ս Ներսեսյան, *Որբաքաղաքը*, էջ 137-138:

[55] Աբով, «Վորբերի ապագան»: 1921 թվականի հոկտեմբերի 12-ին Ալեքսանդր Մյասնիկյանը Սարգիս Աբովյանին նշանակել էր ՄԱՆ-ի հետ հարաբերություններում կառավարության լիազոր՝ ՄԱՆ-ի ու պետական մարմինների միջև կապը հեշտացնելու նպատակով: Տե՛ս Ներսեսյան, *Որբաքաղաքը*, էջ 121:

կահավորության, «լաբորատորական և ֆիզիկանոցային ինվենտարների» ձեռք բերումը և այլն:[56]

Սակայն որքան էլ քաղաքական օրակարգում ձևակերպված լինեին հանրային կրթության ուղիները, 1920-ականների սկզբին դրանց իրագործումը բազմաթիվ խոչընդոտների էր բախվում պետության տնտեսական ծանր դրության պատճառով, և հաճախ էր ստացվում այնպես, որ «դեկրետը մնում եր թղթի վրա»:[57] «Սոցիալական-քաղաքական մեծագույն աղետի հոտ ե փչում այս թվերից»՝ կարդում ենք 1923 թվականին ժողովրդի անգրագիտության վիճակագրությունը պարզող հոդվածներից մեկում:[58] Պետական միջոցների սղությունն իր ազդեցությունն էր ունենում կրթական գործի վրա: Բացված դպրոցների թիվը բավարար չէր զանգվածային անգրագիտության վերացման «հրամայական» պահանջն իրագործելու համար: Սովորողների և դպրոցից դուրս մնացած երեխաների տոկոսային հարաբերությունն ահռելի էր «յուր դառնությամբ»:[59] Պատահական չէ ուրեմն, որ Ասքանազ Մռավյանն, ի ցույց դնելով խորհրդահայ իրականության համար կրթության հեղափոխական նշանակությունը, միաժամանակ չէր թաքցնում կրթական ծրագրերի իրականացման համար Հայաստանի իրապես անմխիթար դրությունը: Այսպես, Մռավյանն անկեղծորեն բացորոշում էր մի կողմից պետական գործիչների հեղափոխական բարձր նպատակադրման, մյուս կողմից՝ դրանք խոչընդոտող իրականության միջև լարումները.

> Նյութական միջոցների պակասության, մեր աղքատության արգելառիթ հանգամանքը ամենացավոտ կերպով զգացվում է մանավանդ վերջին տարվա ընթացքում, երբ սկսվում է կիրառվել տնտեսական նոր քաղաքականությունը: Վերջին ժամանակների ֆինանսական ծանր կրիզիսը առաջացնում է պետական ծախքերի կրճատման քաղաքականություն, որի հարվածներից մեծապես տուժում է իբրև ոչ արտադրական կոմիսարիատ՝ լուսավորության կոմիսարիատը: Կրճատվում են նրա բոլոր վարկերը, կրճատվում պետական գանձարանի հաշվին պահվող ուսուցիչների ցուցակը, կրճատվում լուսժողկոմատի մյուս հիմնարկներին բաց թողնված վարկերը:[60]

Այսպես զանգվածային անգրագիտության վերացման հեղափոխական գործին անվերապահորեն լծվելու վճռականության հետ մեկտեղ ակնհայտ են գործնական բազմաթիվ դժվարություններ, որոնց բախվում էր խորհրդային իշխանությունը լուսավորական նախագծերի իրագործման ժամանակ: 1920-ականների խորհրդահայ մամուլում կրթական ձեռնարկների հետ կողք կողքի են ներկայացվում դպրոցական

---

[56] 1920-ական թվականներին Հայաստանի կրթական խնդիրների մասին տե՛ս մասնավորապես Ասքանազ Մռավյան, «Ժողովրդական լուսավորության հերթական խնդիրները», ըստ՝ Ասքանազ Մռավյան, *Հոդվածներ և ճառեր. 1913-1929* (Երևան: Հայպետհրատ, 1961), էջ 165-174; «Լուսաւորութեան գործը Հայաստանում», *Կարմիր աստղ*, 9 սեպտեմբերի 1921 թ.; «Ժողովրդի լուսաւորութեան գործը», *Խորհրդային Հայաստան*, 3 փետրվարի 1922 թ.; Նորայր, «Կրթա-լուսաւորչական գործը նոր պայմաններում», *Կարմիր աստղ*, 4 ապրիլի 1922 թ.:

[57] Տե՛ս «1921-1922 ուսումնական տարվա դպրոցական կեանքը Երեվանում», *Խորհրդային Հայաստան*, 21 մայիսի 1922 թ.: Հոդվածագիրը մասնավորապես նկատի ունի այն հանգամանքը, որ «Կոմիսարների Խորհրդի դեկրետների համաձայն, բոլոր գրավված դպրոցական շենքերը պիտի 3 օրվա ընթացքում ազատվեին բռնագրավողների կողմից», ինչն «անվերջ խոստումներից» ու «սովորական ձգձգումներից» հետո այդպես էլ չէր ստացվում:

[58] Տե՛ս՝ «Ժողովրդական լուսավորության հերթական խնդիրը»:

[59] Տե՛ս Մռավյան, *Հոդվածներ և ճառեր. 1913-1929*, էջ 167:

[60] Մռավյան, *Հոդվածներ և ճառեր. 1913-1929*, էջ 166-167: Մռավյանի հոդվածին անդրադառնում ենք նաև առանձին, տե՛ս «Հեղափոխական իդեալների և տեղական պայմանների միջև. Ասքանազ Մռավյանի լուսավորական քաղաքականությունը», *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, ըստ՝ https://bit.ly/3jOIWQi, այց՝ 27 դեկտեմբերի 2022 թ.:

կյանքի իրական, դժվարին պայմանները: *Խորհրդային Հայաստանում* դպրոցների գործունեությունը քննարկող հոդվածներից մեկում կարդում ենք. «լույս չունենալու համար պարապմունքներն ընթանում են արագ և յերբեմն թերի…. Գավառական մի քանի դպրոցները պարապմունքները տանում են ամենապրիմիտիվ յեղանակներով. աշակերտները նստում են հատակին, գրում պատի վրա»:[61]

Եթե դրությունը հիրավի ողբալի էր ներկայացվում գավառներում, ապա այն, ըստ էության, շատ չէր տարբերվում նորաստեղծ պետության մայրաքաղաքում: Այս մասին պատկերացում է տալիս *Խորհրդային Հայաստան* թերթում տպագրված «1921-1922 ուսումնական տարվա դպրոցական կեանքը Երեվանում» հոդվածը: Վերջինս դպրոցական կյանքը երևան է հանում այնտեղ տիրող առօրյայի ու կենցաղի մակարդակում: Այսպես, հոդվածից տեղեկանում ենք. դպրոցական շենքերի բացակայության պատճառով լուսավորության կոմիսարիատը «միանգամայն տարբեր պայմաններում, տարբեր ծրագիրներով, տարբեր մեթոդներով և տարբեր մթնոլորտում» գործող դպրոցները ստիպված զետեղել էր միևնույն «անհարմար և փոքրիկ» շենքերի մեջ: Այդպիսով երեխաներին կրթվելու հնարավորությունից չզրկելով հանդերձ՝ կոմիսարիատի համոզմամբ՝ «այդպիսի անբնական և արհեստական կատարված միացումը տարբեր դպրոցների, անպայման վնասելու ե դպրոցական նորմալ պարապմունքներին»:[62] Խոսելով հետևանքների մասին՝ հոդվածագիրը նկատում է.

> Այն դպրոցները, ուր դիցուք պարապմունքները պիտի տևեին 4-6 ժամ, տևում եին ընդամենը 1-3 ժամ, այն էլ ժամը հաշվելով 30 րոպե, այսպիսով միայն հնարավորութիւն եր տրվում այդ շենքում պարապող և հաջորդ դպրոցներին 1-2 ժամ պարապել:[63]

Հատկանշականն այն է, որ տիրող պայմանները հաճախ այնքան անբավարար էին, որ հույսը դրվում էր արդեն ոչ թե նյութական միջոցների, այլ «բնական հանգամանքների» վրա: Անդրադառնալով նրան, որ ձմռանը դպրոցական պարապմունքները հաճախ ընդհատվում էին այն պատճառով, որ ո՛չ ուսուցչությունը և ո՛չ էլ աշակերտությունը չէր ցանկանում դաս անել «չտաքացրած, դուռ ու լուսամուտներից զուրկ սառնամանիք» դասարաններում՝ հոդվածագիրը նշում է.

> Ձմեռվա պարապմունքները գլխավորապես կախված եին արևի քմահաճույքից, եթե նա ժպտար և երեսի քողը բաց աներ և իւր ճառագայթներով տաքացներ դասարանները և երեխաներին, դպրոցներում պարապմունքներ տեղի կունենային, հակառակ պարագային երեխաները տուն կարձակվեին:[64]

Խորհրդային Հայաստանի «ընդհանուր կուլտուրական մակարդակը». Մյասնիկյանի լուսավորական քաղաքականությունը

Ալեքսանդր Մյասնիկյանը, աչքի առաջ ունենալով Հայաստանի թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական հենքը, լուսավորության գործն սկսում էր հենց գյուղից: Իր զեկույցում հղելով Բագրատունու՝ Ապարանի գյուղերը նկարագրող վերոբերյալ հոդվածին,

---

[61] «Յերեվանի գավլուսբաժնում», *Խորհրդային Հայաստան*, 15 մարտի 1923 թ.:
[62] Տե՛ս «1921-1922 ուսումնական տարվա դպրոցական կեանքը Երեվանում»:
[63] «1921-1922 ուսումնական տարվա դպրոցական կեանքը Երեվանում»:
[64] «1921-1922 ուսումնական տարվա դպրոցական կեանքը Երեվանում»:

Մյասնիկյանն առանց հավելյալ վերադրումների է պատկերում տգիտության մեջ պարփակված հայկական գյուղերի դրությունը.

> Այդպես ե հայ գյուղը շատ տեղերում՝ խավար, գետնափոր, յետ ընկած, տգետ ու աղքատ, նամանավանդ *գետնափոր*: Դա տգիտության և աղքատության լուռ արձանն ե, աղաղակող բողոքող: Մահվան կռիվ պետք ե հայտարարել այդ գետնափորության [դեմ]: Մեր կարծիքով դրա համար պետք ե գյուղացուն սրսկել նախ՝ գրագիտության, յերկրորդ նախաձեռնության և յերրորդ՝ ինքնոգնության [sic!] շիճուկներ (ընդգծումը՝ Մյասնիկյանի):[65]

Մյասնիկյանն ինքը, քաջ գիտակցելով գյուղացու սոցիալական դրությունը և հրատապ կարիքները, առաջարկում էր. «Քանդեցե՛ք այդ գետնափոր տները: Տվե՛ք գյուղացուն հագուստ, վառելանյութ և աղ: Սա յե որվա [sic!] պահանջը»: Միևնույն ժամանակ նկատելով, որ դա որքան էլ բավարարեր գյուղացու նյութական կարիքները, սակայն չէր հանգեցնի երկարաժամկետ փոփոխությունների, Մյասնիկյանը հավելում էր.

> Բայց ամենից առաջ, եթե ուզում եք, տվե՛ք նրան ուսում, գիտություն.... Քաղաքին լուսավորությունը պետք ե, պետք են նրան թանգարանները, թատրոններն ու համալսարանները, բայց ավելի մեծ անհրաժեշտություններ են թանգարանը, թատրոնն ու համալսարանը գյուղում, վոր *գրագիտություն* բառով ե բնորոշվում, առանց վորի չկա նոր գյուղ, չկա գյուղացու բարեկեցություն, իսկ առանց վերջինիս հնարավոր չե տարվել խորհրդային շինարարությամբ (ընդգծումը՝ Մյասնիկյանի) (էջ 34-35):

Մյասնիկյանն, ուրեմն, հայկական գյուղերի արդի դրության ու գյուղացու աղքատության պատճառը չէր բացատրում միայն նյութական միջոցների սղությամբ, այլ այն կապում էր սեփական միջավայրի ընձեռած հնարավորությունների հանդեպ գյուղացու ցուցաբերած անհրազեկության հետ.

> Ահա գյուղի մի թաղում գյուղացին իր փլած տունն ե կարկատում: Մտնում ես ներս. կտուրը բաց ե, նա մնում ե չավարտված, վորովհետև տանտերը փայտ չունի, իսկ Բայազետի շրջանում փայտ ասածդ չկա: Հապա ինչո՞ւ յեղեգնով չես ծածկում կտուրը, բնականորեն հարցնում ես նրան և ցույց տալիս մոտակայքում աճող յեղեգնը: Գյուղացին քթի տակ ծիծաղում ե: Նրա կարծիքով յեղեգնը վոչ մի բանի պիտանի նյութ չե (էջ 37):

Այսպիսով, Մյասնիկյանը գյուղացու սոցիալական դրության վերափոխումն անմիջականորեն կապում էր սեփական կյանքի ու միջավայրի հանդեպ գյուղացու գիտակցության վերափոխման հետ: Նրա համար գյուղական կենցաղի ու վարքուբարքի արդիականացումը հնարավոր չէր միայն քաղաքական միջամտությամբ. այն պահանջում էր ներսից՝ գյուղացու իսկ կողմից տարվող երկարատև աշխատանք: Պատահական չէ, որ Մյասնիկյանը կարծում էր, որ սոցիալիզմը և խորհրդային կարգերը կարող են օգնության հասնել գյուղին ու գյուղացուն միայն «գյուղացու արթնացումով և կայտառ առաջադիմության քայլերով, տնտեսական ու կուլտուրական կյանքում պրպտելու, փնտռելու, շարժվելու և անընդհատ առաջ ընթանալու ճանապարհով» (էջ 36): Մյասնիկյանի համոզմամբ՝ գյուղացու կյանքի պայմանները բարեփոխելու համար

[65] Մարտունի, *Խորհրդային Հայաստանի ուղին*, էջ 34: Այսուհետ սույն աղբյուրին հղումները կտրվեն տողամիջում՝ նշելով էջը:

նույնիսկ փող չի հարկավոր, այլ «մի փոքրիկ աշխատանք, ձեռներեցություն և ըմբռնումն այն բանի, թե առանց հնարագիտության, ինքնոգնության կամ յեղած հում նյութից մի բան ստեղծելու ինքնագիտակցության չկա տանելի կյանք, չկա առաջադիմություն» (էջ 37):

Այստեղ էլ թերևս ի հայտ է գալիս 1920-ականների սկզբի Հայաստանում լուսավորական քաղաքականությունների հիմնարար լարումը. ակնհայտ է, որ Խորհրդային Հայաստանի գործիչները կրթական քաղաքականություններով միտված էին գյուղացու կենցաղն ու բարքը բարեփոխելու, սակայն, չունենալով դրա լիարժեք հնարավորությունները, այս գործընթացներում ստիպված էին ապավինել հենց գյուղացիությանը: Լուսավորական քաղաքականությունները պետք է կենսագործվեին այնպես, որ գյուղացին կրթությամբ գիտակցեր սեփական կյանքի դրությունը և հենց ինքը ցանկանար վերափոխել այն: Ըստ Մյասնիկյանի՝ Հայաստանի *բանվորն ու աղքատ գյուղացին են*, որ «ամենից առաջ վերաշինելու յեն գյուղը», քանի որ նա գյուղացիական Հայաստանի հիմքն է (էջ 37): Արդյունքում՝ կրթությամբ վերափոխման ենթարկվող գյուղացին ի՛նքը պետք է նպաստեր իր իսկ կենսաձևերի փոփոխման գործընթացներին: Ուրեմն՝ Մյասնիկյանի համար կրթությունը գործնական էր այն պատճառով, որ պետք է արտահայտվեր նաև գյուղացու վերափոխված նիստուկացի ու կենցաղավարության մեջ: Այս անկյան տակ է Մյասնիկյանը կարևորում գրագիտության նշանակությունը.

> Հողը լավ մշակել, պատշաճ հագուստով ման գալ և կուշտ ապրել կարող ե նա, ով ունի գիր, գրականություն, ունի վարժ ու թափանցող միտք, ով իր նիստ ու կացի մեջ գիտե կիրառել կյանքի ու զարգացման գոնե ամենակարևոր և շատ ընդհանուր որենքները [sic!] կամ կանոնները (էջ 34):

Երևանի պետական համալսարանը

Կրթության այսպիսի ըմբռնումը Մյասնիկյանի մոտ կապվում էր ազգային գիտության զարգացման հնարավորության հետ: Ըստ Մյասնիկյանի՝ հայերեն գիտությունն է, որ «այսոր [sic!] ծաղկում ե Հայաստանում», իսկ գիտության տաճարը՝ «Յերևանի պետական համալսարանն ե, վոր հազարի մոտ ուսանողություն ունի և յոթանասունի մոտ գիտնական ուսուցիչներ ե համախմբել իր շուրջը» (էջ 45-46): Խոսելով այն մասին, որ Հայաստանը զարգանում է մշակութային մի շարք գործոններով՝ լրագիր, գիրք, թատրոն, թանգարան, գրադարան, կոնսերվատորիա և այլն, Մյասնիկյանը հոդվածի վերջում առանձին անդրադառնում է նաև հասարակական վերաշինության գործընթացներում Պետական համալսարանի դերին: Համալսարանը գրագիտության տարածման խնդրի հետ մեկտեղ նա դիտարկում է իբրև «համարժեք և կենսական մեծություն», որի համար ոչ մի ջանք չպետք է խնայել.

> Համալսարանն այն հնոցն ե ու լաբորատորիան, վորից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, վոր կը տա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում ե դաշտագետներ, վորոնց ստեղծելու յե դարձյալ համալսարանը: Արդյունագործությունն ու արհեստը չեն կարող բարգավաճել առանց ճարտարապետի, վորին նույնպես պատրաստելու յե համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանելու յե շարունակ ու անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանն այդ սիրտն ե: Նա չափանիշն ե լինելու հայկական կուլտուրայի, նրա մշակույթի և նրանց յերկուսի կանոնավոր զարգացման (էջ 46):

Այսպես Խորհրդային Հայաստանում պետական համալսարանը կազմավորվում է Առաջին հանրապետության շրջանում հիմնադրված Երևանի պետական համալսարանի հիման վրա: Վերակոչվելով Երևանի ժողովրդական համալսարան՝ սկզբնական շրջանում այն գործում է երկու՝ բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետներով: 1920 թվականի դեկտեմբերի 17-ի լուսժողկոմի հրամանով փակվում են նախկին համալսարանի ֆակուլտետները, արձակվում նախկին աշխատակիցները: Նոր համալսարանի կազմակերպության հիմունքները, ծրագիրն ու դասախոսական կազմը որոշելու համար ստեղծվում է հատուկ հանձնաժողով:[66] 1920 թվականի դեկտեմբերի 28-ին հաստատված ժամանակավոր կանոնադրությամբ ամրագրվում էր հետևյալը.

> Երեւանի Ժողովրդական Համալսարանը բանւորա-գիւղացիական ազատ դպրոց է, որ մասսաների սեփականութիւնն է դարձնում բնական և սոցիալական գիտութիւններն ու նրանց ուսումնասիրութեան մեթոդները, նպաստելով կեանքի գիտակցական վերաշինութեանը կոմունիստական աշխարհայեացքի հիմունքներով:

Այս նպատակներն իրականացնելու համար Ժողովրդական համալսարանը «կազմակերպում է սիստեմական դասընթացներ և հատուածական դասախօսութիւններ, գործնական, լաբորատորական և սեմինարական աշխատանքներ, հրատարակում է ամեն տեսակ աշխատութիւններ և օժանդակիչ ձեռնարկներ, կազմակերպում է գրադարան, ընթերցարան, թանգարան և այլն»:[67] Դասախոսությունների և գործնական պարապմունքների ծրագիրը մշակելիս պետք է հաշվի առնվեր ուսանողության պատրաստվածության աստիճանը: Դասընթացները տարվում էին մեծամասամբ լաբորատոր եղանակով՝ ըստ կարելվույն քիչ ժամեր հատկացնելով դասախոսություններին: Հատուկ մասնագիտական պատրաստություն պահանջող դասախոսություններ էին կազմակերպվում, եթե նախապես առաջարկ էր արվում այդ ուղղությամբ ուսանողության կողմից: Ուսումը համալսարանում անվճար էր, համալսարան էին ընդունվում առանց քննությունների՝ 16 տարին լրացած անձինք: Առաջնահերթությունը տրվում էր բանվորներին ու աղքատ գյուղացիներին և ապա՝ մյուս քաղաքացիներին:[68]

Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններում ձևավորված համալսարանական կրթական ըմբռնումները, այդուհանդերձ, տարբեր էին իրենց հեռանկարներում:[69] Առաջին հանրապետությունում գործող Երևանի համալսարանի

---

[66] Երևանի համալսարանի վերակազմության մասին հրամանը տե՛ս *Հ.Ս.Խ.Հ. դեկրետների և հրամանների ժողովածու*, էջ 17-18: Հրամանի այս կետն, ըստ էության, ֆորմալ բնույթ ուներ: Ավելորդ է նշել, որ խորհրդային շրջանում համալսարանի դասախոսների շարքում էին նախկինում համալսարանի կազմակերպչական աշխատանքներում ներգրավված և Առաջին հանրապետության շրջանում ղեկավար պաշտոններ զբաղեցրած այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին օրինակ՝ Նիկոլ Աղբալյանը, Սիրական Տիգրանյանը, Դավիթ Զավրյանը և այլք:

[67] *Հ.Ս.Խ.Հ. դեկրետների և հրամանների ժողովածու*, էջ 35: Ժողովրդական համալսարանի կանոնադրության հաստատման հետ կապված հետաքրքրական է մի դեպք՝ արձանագրված համալսարանի վերակազմության հանձնաժողովի՝ դեկտեմբերի 22-ին կայացած 6-րդ նիստի ժամանակ: Հայտնի է, որ լուսավորության կոմիսարիատը հանձնաժողովին համալսարանի կանոնադրությունը մշակելու իրավասություն էր վերապահել: Այդուհանդերձ այդ նիստում լուսժողկոմը քննադատության է ենթարկում հանձնաժողովի մշակած ժամանակավոր կանոնադրությունը: Լուսժողկոմն ինքը առաջադրում է ժամանակավոր կանոնադրության իր նախագիծը, որը որոշ ուղղումներով ու լրացումներով հաստատվում է հանձնաժողովի կողմից: Տե՛ս Ֆ. Մամիկոնյան, Ս. Միրզոյան (կազմ.), *Երևանի համալսարան. 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու* (Երևան: Երևանի համալսարանի հրատ., 1995), էջ 282:

[68] Տե՛ս *Հ.Ս.Խ.Հ. դեկրետների և հրամանների ժողովածու*, էջ 36:

[69] Խորքային տարամիտումները շեշտելիս հարկ է առնվազն նկատել, որ երկու համալսարանների կրթական պատկերացումները սերում էին 19-րդ դարի գերմանական, մասնավորապես՝ հումբոլդտյան համալսարանի կրթական ընկալումներից: Հումբոլդտի կրթական պատկերացումների մասին տե՛ս Վիլհելմ ֆոն Հումբոլդտ,

հիմքում մեծ իմաստով ընկած էր կրթության «բարոյական» ըմբռնումը, որը կապվում էր հայերի՝ ազգային գիտությամբ քաղաքակիրթ ազգերի շարքում սեփական տեղն ունենալու բաղձանքների հետ:[70] Կրթության այսպիսի ըմբռնումը մի իմաստով հակադիր էր առօրյա կենցաղավարությանը: Ինչպես իր «Բարձրագույն կրթական ավանդույթը Հայաստանում. երկու հարացույց» հոդվածում նշում է գրականագետ Սիրանուշ Դվոյանը.

> Գործնական, ապրվող կյանքում առօրյա կենցաղավարությունն ու բարձր մշակույթը հակադրված էին միմյանց: Սա ծնունդ էր տալիս ավերիչ մի երկփեղկման. որքան մեծ էր բարձր կամ զարգացած քաղաքակրթության մեջ լինելու ձգտումը, այնքան մեծ էր այն կենցաղից կտրելու և ներփակ մշակութային ձևերի մեջ տեսնելու տենչանքը:[71]

Մինչդեռ, ինչպես տեսանք, Խորհրդային Հայաստանում կրթությունը զուգորդվում էր մարդու գործնական կյանքի հետ, ուստի ոչ թե հակադիր, այլ մեծ իմաստով կապվում էր առօրյա կենցաղավարության, մասնավորապես՝ կյանքը գործնականում ապրելի դարձնելու առավել զարգացած եղանակների մշակման հետ: Թեև Առաջին հանրապետության շրջանում համալսարանում նույնպես առաջնակարգ տեղ էր հատկացված գործնական կրթությանն ու գյուղատնտեսության արդյունաբերականացմանը, վերջիններս կարևորվում էին այլ անկյան տակ. դրանք պետք է ստեղծեին արդի մեքենայացված գյուղատնտեսության այնպիսի համակարգ, որը կփոխարիներ քաղաքական արհավիրքների արդյունքում կորսված մարդկային ռեսուրսներին:[72]

Այսպես, որքան էլ իրականություն էր դարձել հայության՝ ինքնուրույն բարձրագույն կրթական հաստատություն ունենալու փաստն ինքնին, այն կանոնավոր հունի մեջ պահելու և կրթական քիչ թե շատ տանելի պայմաններ ապահովելու հարցը ոչ միշտ էր ոգևորիչ: Համալսարանի գործունեությունն սկզբնական շրջանում ուղեկցվում էր գործնական բազմաթիվ դժվարություններով (սկսած դասախոսների կենցաղային ծանր պայմաններից, վերջացրած՝ համալսարանի կազմակերպչական աշխատանքներով)՝ հաճախ պահվելով միայն այդ գործին լծված մարդկանց անձնական զոհողությունների գնով: Եվ այդուհանդերձ, տիրող ծանր պայմաններում էր, որ համալսարանում միաժամանակ զարգանում էր գիտությունը: Կենցաղային ծանր պայմանների և գիտության զարգացման հնարավորությունների միջև այս հակասություններով է համալսարանական կյանքը նկարագրում նաև համալսարանի առաջին ռեկտոր (1920-

---

«Բեռլինի բարձրագույն գիտական հաստատությունների ներքին և արտաքին կազմակերպական կառուցվածքի մասին», ըստ՝ *Վերամտածելով համալսարանական ավանդույթը Հայաստանում* (Երևան: Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն, 2021), էջ 221-235:

[70] Կրթության՝ որպես «բարոյական հաստատունության» ըմբռնումները լայն քաղաքացիություն ունեին 19-րդ դարի Գերմանիայում, որտեղ քաղաքական ինքնուրույնությունից զուրկ ժողովրդի կյանքում կրթությունն ու մշակույթը դիտարկվում էին իբրև հոգևոր ինքնուրույնության ցուցիչներ: Այս պատկերացումներին հասու էին դառնում նաև Գերմանիայում ուսանած հայ ուսանողներից շատերը, որոնցից էր նաև Երևանի համալսարանի հիմնադրման ակունքներում կանգնած քաղաքական գործիչ, Առաջին հանրապետության շրջանում հանրային կրթության և արվեստի նախարար (1918-1919 թթ.) Գևորգ Մելիք-Կարագյոզյանը:

[71] Սիրանուշ Դվոյան, «Բարձրագույն կրթական ավանդույթը Հայաստանում. երկու հարացույց», ըստ՝ *Վերամտածելով համալսարանական ավանդույթը Հայաստանում*, էջ 68-69:

[72] Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների՝ համալսարանում գործող տեխնիկական կրթության ըմբռնումները տարբերակելու սահմանը շատ նուրբ է՝ հաճախ նույնացման վտանգին ենթակա: Տե՛ս Սիրանուշ Դվոյան, «Բարձրագույն կրթական ավանդույթը Հայաստանում», էջ 46-50, 61-69:

1921 թթ.) Հակոբ Մանանդյանը՝ կնոջն ու դստերն ուղղված իր նամակներում:[73] Խոսելով համալսարանում դասավանդող պրոֆեսորների, այդ թվում՝ իր կյանքի վատթար կացության մասին (աշխատավարձերի ուշանալը, բնակարան չունենալը, իր համար ծանծրալի բնույթ կրող վարչարարական աշխատանքներ կատարելը), Մանանդյանը միաժամանակ չի վարանում արտահայտել իր ոգևորությունը, երբ խոսում է համալսարանում իր դասախոսությունների, իր շուրջը խմբված ու նեցուկ կանգնած ուսանողության, գիտական գործունեություն ծավալելու իր հնարավորությունների՝ առկա պայմաններում իր «միակ մխիթարանքի» մասին: Նամակներից միաժամանակ երևում են Մանանդյանի ջանքերն՝ ուղղված Հայաստանում հաստատված մտավորականներից շատերին համալսարանում ներգրավելուն: Վերջիններիս թվում Մանանդյանը նշում է Կարապետ Մելիք-Օհանջանյանին, Կոստան Զարյանին, Հրաչյա Աճառյանին, Ալեքսանդր Թամանյանին և այլոց: 1923 թվականի մայիսի 7-ով թվագրված իր մի նամակում Մանանդյանը գրում է. «Երևան է եկել Պարսկաստանից Ա. Թամանյանը, որը դասախոսություններ է կարդալու համալսարանում: Ծանոթացա նրա հետ և թողեց ինձ վրա խորը տպավորություն»: Նամակի մեխը, սակայն, այլ տեղ է: Մանանդյանը, խոսելով Թամանյանի՝ Երևանի հատակագծման մասին, արդեն քաղաքաշինության մակարդակում երևան է հանում Հայաստանում խորհրդային արդիականացման քաղաքականությունների հիմնարար լարումը՝ լարումը հեղափոխական իդեալների և տեղական պայմանների միջև.

> Նա արդեն Երևան քաղաքը, բոլոր տներով, հրապարակներով ու պրոսպեկտներով նախագծել է: Տեսնողներն ասում են, որ հոյակապ մի աշխատանք է այդ և Երևանը նրա նախագծով Աթենքից ավելի գեղեցիկ քաղաք է դառել: Նրա բախտից տները Երևանում շարքերով քանդում են, որովհետև շինված են եղել ցեխից, և այժմ իսկ արդեն քաղաքին նոր պլանիրովկա է տրվում համաձայն նրա ծրագրի: Իհարկե այդ ամենը հեռավոր ապագայի գործ է լինելու, իսկ մենք այժմ մի տուն անգամ շինելու հնարավորություն չունենք: Զարմանալի է նրա լավատեսությունը, հավատում է, որ շուտով սկսելու է շինարարական մեծ գործը:[74]

Ապագայի հանդեպ լավատեսությունն էր, ուրեմն, որ առկա դժվարին պայմաններում գործելու կամք էր տալիս թե քաղաքական և թե մտավորական գործիչներին: Նյութական գեթ ամենատարրական հնարավորություններից զուրկ այս պայմաններում սեփական հայրենիքի վերաշինությունը ստանձնած մարդկանց գործունեությունը մոտենում էր կրոնական հարթության՝ ոչ ավել, ոչ պակաս դիտարկվելով իբրև «նահատակություն»: Մանանդյանի խոսքերով. «Այստեղ աշխատողները նահատակներ են սոսկ՝ իրանց անձնական կյանքը զոհ բերած ժողովրդին»:[75] Ուրեմն, չնայած լուսավորությունը

---

[73] Պետական համալսարանի վերաբերյալ Հակոբ Մանանդյանի նամակների առնչությամբ տե՛ս *Բանբեր Երևանի համալսարանի*, թիվ 3, 1972, էջ 153-162: Հակոբ Մանանդյանն, Առաջին հանրապետության շրջանում լինելով Երևանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, շարունակել է իր աշխատանքը նաև խորհրդային շրջանում (1921-1922 թթ.-ին վարելով ռեկտորի, 1921-1923 թթ.-ին՝ արևելագիտության և պատմագրական ֆակուլտետների դեկանի, 1921-1925 թթ.-ին՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնները): Սա այն ուշագրավ դեպքերից է, որ փաստում է Հայաստանի առաջին և խորհրդային հանրապետությունների միջև եղած ժառանգորդության իրողությունը: Մանանդյանի օրինակը միևնույն ժամանակ ուսանելի է՝ հասկանալու, թե խորհրդային իրավակարգը դրական ինչ նախադրյալներ ստեղծեց քաղաքական նոր իրականության պայմաններում խորհրդային կարգերին գաղափարապես ոչ համակիր մտավորականության համար: Ավելորդ է նշել, թե իրենց հերթին դրական ինչ ներդրումներ ունեցան այդ մտավորականները Խորհրդային Հայաստանի մշակույթի ու գիտության զարգացման գործում: Այս առումով հատկապես արժեքավոր են Աշոտ Հովհաննիսյանի հուշերը Հակոբ Մանանդյանի մասին: Հովհաննիսյանը ոչ պատահականորեն Խորհրդային Հայաստանում ստեղծված իրադրության պայմաններում էր, որ տեսնում էր Մանանդյան-գիտնականի վերածնունդը: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, *Հուշեր և բնութագրումներ* (Երևան: Հայաստան, 1969), էջ 115-122:

[74] *Բանբեր Երևանի համալսարանի*, էջ 157-158:

[75] *Բանբեր Երևանի համալսարանի,* էջ 156:

որդեգրել էր կրոնական հավատքի հաղթահարման ճանապարհը, ստացվում էր այնպես, որ քայքայված երկրում լուսավորական նախագծերը դառնում էին բարեկեցիկ կյանքի հեռանկար խոստացող այսպես ասած «նոր դավանանք», որին, ինչպես Թամանյանի կամ Մռավյանի պարագայում էր, պետք է «հավատային» «լավատեսությամբ»:[76]

Գլուխ 3. Մշակութային ու գեղարվեստական հաստատությունների հիմնադրումը լուսավորական քաղաքականությունների ուղեծրում

«Շռայլութիւն թէ՞ անհրաժեշտութիւն». Հայաստանի մշակութային դաշտը 1920-ականների սկզբին

Կրթությունից զատ՝ լուսավորական քաղաքականության մաս էին կազմում արվեստի հիմնարկայնացման գործընթացները: Դրանք գյուղացու սոցիալական դրության վերափոխման ու գյուղի արդիականացման գործընթացները պետք է առաջ մղեին արդեն գեղարվեստական ու մշակութային հաստատությունների մակարդակում:[77] Հակադարձելով Պոլսի *Ժողովրդի ձայն* թերթում բարձրացված այն խնդրին, թե Խորհրդային Հայաստանի կառավարությունը շռայլություններ է թույլ տալիս գեղարվեստի բնագավառում, երբ երկիրը տակավին քաղցած է, թե շատ է ոգևորվում կրթամշակութային ձեռնարկներով, թե «մեծ փողեր են մսխվում» այդ նպատակով, և որ ավելի լավ կլիներ այդ միջոցները գործադրել ժողովրդի ավելի անմիջական կարիքների համար, Մռավյանն իր «Շռայլութիւն թէ անհրաժեշտութիւն» հոդվածում նկատում է.

> Դժբախտաբար Հայաստանի կառավարութիւնը շատ է աղքատ, որպէս զի որ և է գործում կարողանար շռայլութիւն անել.... Այդ կուլտուրական հաստատութիւնների կազմակերպութիւնը ամենասուր անհրաժեշտութիւն է Հայաստանի համար, անհրաժեշտութիւն է, որովհետև մեր պետական-շինարարական աշխատանքը դա զուտ տեխնիքական գործ չէ, այլ կուլտուր հասարակական մի լայն աշխատանք, որ կոչւած է հին բուրժուական կուլտուրայի փոխարէն կազմակերպել նոր՝ սոցիալիստական, համայնական կուլտուրա:[78]

---

[76] Այս առումով պատահական չէ, ուրեմն, որ Մռավյանը, նկարագրելով հանդերձ Հայաստանում կրթական գործի գրեթե հուսալքիչ դրությունը, միաժամանակ նշում էր. «Այդ պատկերը շատ հեռու է բավարար լինելուց, բայց մենք, տրամադիր չենք դրությունը համարելու սև, հուսահատական և զուրկ *լուսավոր հորիզոնից*» (ընդգծումը՝ Լ. Շ.): Տե՛ս Մռավյան, *Հոդվածներ և ճառեր 1913-1929*, էջ 169:

[77] Այն, որ գեղարվեստական ու մշակութային հաստատությունների հիմնադրման մտահոգությունն ուղիղ կերպով կապվում էր Հայաստանի աշխատավոր գյուղացիության հետ, վկայում է, օրինակ, *Կարմիր աստղ* թերթում տպագրված «Մեր անելիքը Հայաստանում» հոդվածը: Այստեղ, հոդվածագիրը, մասնավորապես նկատելով, որ խորհրդային կարգերի հաստատումից հետո հայ մշակութային կյանքի՝ Թիֆլիսում կենտրոնացումն անարդյունավետ է, նշում է. «Թատրոնը, դպրոցը, պրոպագանդայի այդ ուժեղ զենքերը ժողովրդից դուրս կը լինեն, հեռու այն գիւղացիութիւնից, որը հանդիսանալու է գլխաւոր հիմքը սովետական վարչաձևի: Մեր գիւղացիութեան համար մեզ անհրաժեշտ են թատրոն, կինո թատրոն, դպրոց, լրագիր, գիրք, որպէսզի գիւղացիութիւնը մօտեցնենք գիտութեան, որպէսզի ստեղծենք ուժեղ և առողջ տնտեսութիւն, որից դուրս Խորհրդային վարչաձևը անիմաստ կը լինէր»: Տե՛ս՝ Յ. Տ.-Յ., «Մեր անելիքը Հայաստանում», *Կարմիր աստղ*, 6 ապրիլի 1921 թ.:

[78] Ա. Մռաւեան, «Շռայլութիւն թէ անհրաժեշտութիւն», *Խորհրդային Հայաստան*, 5 մարտի 1922 թ.: Մռավյանը միակը չէր, որ արձագանքել էր *Ժողովրդի ձայնում* բարձրացված քննադատությանը: Մյասնիկյանն, իր հերթին, անդրադառնալով դրան, նշում էր. «Պոլսի «Ժողովրդի ձայնը» ասում է անհասկանալի են Հայաստանի

Մշակութային հաստատությունների հիմնադրման Մռավյանի ձևակերպած սուր պահանջը հնչում էր սակայն քաղաքական օրակարգում: Մինչդեռ հարց է՝ հայաստանյան իրականությունում ինչպիսի պատկեր էր ներկայացնում մշակութային դաշտը 1920-ականների սկզբի դրությամբ: Այսպես, եթե խորհրդահայ առաջին գործիչների կողմից քաղաքական-տնտեսական տեսակետից Հայաստանը դիտարկվում էր «ամենադաժան, ամենադժբախտ» երկիրն Անդրկովկասում,[79] ապա մշակութային տեսակետից Հայաստանը, որ «երկու կարգին տպարան չունի, մի լիտոգրաֆիա չունի, մի կարգին շէնք չունի համալսարանի համար, պետական այլ հաստատութիւնների համար»,[80] ներկայացնում էր «մի ամայի անապատ»:[81] Հասարակական գործիչ, գրականագետ Հարություն Սուրխաթյանն, անդրադառնալով Հայաստանի մշակութային դրությանը, գրում է.

> Անդրկովկասի Խորհրդային երեք հանրապետութիւնների մէջ Հայաստանը ամենաաղքատն ու խեղճն է: Նա իր բոլոր հիւթերը, իր բոլոր կենդանի ոյժերը տասնեակ տարիների ընթացքում կուտակել է իր սահմաններից դուրս, իսկ ինքը այսօր մնացել զուրկ կապիտալիստական կարգերի թողած անհրաժեշտ ժառանգությունից…. Հայաստանն այսօր աղքատ է ամեն բանով, մանաւանդ կուլտուրայի զարգացման միջոցներով: Եւ թող բոլոր անբարեացակամները գէթ մի անգամ գնան և խղճի մտօք դիտեն Հայաստանի ոչ պրովինցիան, ո՛չ, այլ հէնց կենտրոնը և հարց տան. հնարաւո՞ր է նման անձուկ վիճակ Խորհրդային հաւասար հանրապետութիւններից մէկի համար:[82]

Առողջապահության, որբերի խնամքի, գաղթականության խնդիրներն ստանձնած կառավարության համար որքան էլ օրակարգային էր մշակութային ու գեղարվեստական կյանքի կազմակերպումը, այնուամենայնիվ, այն բազմաթիվ դժվարություններ էր հարուցում հատկապես տնտեսական ծանր դրության մեջ գտնվող պետության նյութական սուղ ռեսուրսների, ինչպես նաև անհրաժեշտ մասնագետների բացակայության պատճառով: Աշոտ Հովհաննիսյանի խոսքով՝ երկրում «չկան յարմարաւոր շէնքեր, պակասում են լոյս և վառելիք, կահաւորութիւն և ձեռնարկներ, կարող և անձնուէր աշխատաւորներ»:[83] Անշուշտ, Հովհաննիսյանն ինքը, ստանձնած լինելով երկրի լուսավորության կոմիսարի պաշտոնը, պետք է, որ առավել մոտիկից շոշափած լիներ երկրում առկա մշակութային խնդիրները: Միաժամանակ, սակայն, վերջինիս պատմաբանական հայացքն է, որ ներկայի մշակութային դրությունն ընդունելով իբրև օբյեկտիվ իրականություն, թույլ է տալիս խնդրին մոտենալ պատմական անկյան տակ: Այլ առիթով Հովհաննիսյանը նկատում էր, որ պրոլետարիատը զրկված էր տնտեսական, հասարակական ու մշակութային հաստատված այն հարաբերություններից, որին տիրապետում էր բուրժուազիան նախքան հեղափոխությունը: Ըստ Հովհաննիսյանի՝ բուրժուազիան մինչ իշխանության գալը «ստեղծել էր իր սեփական կուլտուրան, ուներ իր

կառավարութեան շռայլութիւնները գեղարուեստի համար, երբ երկիրը քաղցած է: Թէ իբր մենք սնանկ լինելով լուսաւորութեան գործի վրայ միլիարդներ ենք ծախսում: Այսպիսով նրանք մեր հաշուին մեզ քարոզ են կարդում (ծափեր), բայց պիտի իմանալ, որ աշխատաւորութիւնը, մենք միայն իրաւունք ունենք այս մասին խօսել: Լուսաւորութեան գործը թողած միմիայն տնտեսական և այլ խնդիրներով զբաղուել չենք կարող: Մեր յաղթութիւնը կրթութիւնից, գիտակցութիւնից և դաստիարակութիւնից է կախուած»: Տե՛ս «Ընկ. Մյասնիկեանի ճառը Հայաստանի խորհուրդների առաջին համագումարի առաջին նիստում, որպէս զեկուցում խորհրդային իշխանութեան կողմից», *Խորհրդային Հայաստան*, 2 փետրվարի 1922 թ.:

[79] Տե՛ս «Ընկ. Մեասնիկեանի ճառը»:

[80] Սուրխաթ, «Հայաստանի կուլտուրական բարգաւաճումը և հարեւան պրոլետարիատը», *Կարմիր աստղ*, 22 հունիսի 1921 թ.:

[81] Սուրխաթ, «Կուլտուր-կրթական գործը Խորհրդային Հայաստանում», *Կարմիր աստղ*, 29 նոյեմբերի 1921 թ.:

[82] Սուրխաթ, «Հայաստանի կուլտուրական բարգաւաճումը և հարեւան պրոլետարիատը»:

[83] «Լուսաւորութեան գործը Հայաստանում»:

վորոշ իդեոլոգիական ֆրոնտը և արժեքները», մինչդեռ այդպես չէր պրոլետարիատի դրությունը: Հովհաննիսյանի կարծիքով՝ պրոլետարական հեղափոխության առանձնահատկությունն էլ հենց այն էր, որ «նա մինչև չխլեց իշխանությունը, վոչ մի հնարավորություն չուներ ստեղծելու իր սեփական իդեոլոգիական ֆրոնտը, կուլտուրան, միջավայրը և կենցաղը»:[84]

Արվեստագետների և քաղաքական գործիչների ջանքերն՝ ուղղված Հայաստանում գեղարվեստական դաշտի կայացմանը

Խորհրդային Հայաստանում գեղարվեստական կյանքի կազմակերպմանն ուղղված առաջին քայլերից էր 1921 թվականինին բացված և, ըստ էության, Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում հնարավոր դարձած գեղարվեստական առաջին ցուցահանդեսը: Ուշագրավ է, որ այն դեռևս 1916-ին մի խումբ արվեստագետների (Մարտիրոս Սարյանի, Վրթանես Ախիկյանի, Ստեփան Աղաջանյանի, Ալեքսանդր Թամանյանի, Գաբրիել Գյուրջյանի, Հակոբ Կոջոյանի) կողմից Թիֆլիսում հիմնադրված Հայ արվեստագետների միության հինգերորդ ցուցահանդեսն էր: Խորհրդային իշխանությունների կողմից այս ցուցահանդեսի կազմակերպումն արդեն Խորհրդային Հայաստանում բացահայտում է նոր պետականության գեղարվեստական կյանքի կայացման գործընթացներում հին սերնդի արվեստագետներին ներգրավելու խորհրդահայ գործիչների քաղաքական նպատակադրումը: Միության անդամներն իրենց հերթին, Խորհրդային Հայաստանն ընբռնելով իբրև խաղաղ, ստեղծագործ աշխատանքի ազգային նոր ասպարեզ, պատրաստ էին լծվելու իրենց իսկ վերածնվող հայրենիքի՝ խորհրդային երկրի շինարարության գործին: Ցուցահանդեսը միաժամանակ քաղաքական գործիչների և արվեստագետների՝ Հայաստանում ստեղծագործական միջավայրի կայացմանն ուղղված միասնական ջանքերի գործնական իրականացումն էր: Այսպես, ցուցահանդեսի բացման առթիվ Ասքանազ Մռավյանի և Հայ արվեստագետների միության նախագահ Եղիշե Թադևոսյանի խոսքերը լավագույնս են բնորոշում թե՛ նոր պետականության ընթացիկ աշխատանքներին արվեստի միջոցով մասնակից դառնալու Միության անդամների պատրաստակամությունը և թե Խորհրդային Հայաստանի պետական գործիչների՝ հին սերնդի արվեստագետների հանդեպ ցուցաբերած քաղաքական անվերապահ աջակցությունը: Մռավյանը նշում է.

> Ողջունում եմ Հայաստանի աշխատաւորութեան և մասնաւորապէս հայ նկարիչ ընկերներին, որոնք թողած Թիֆլիսի և այլ հեռաւոր ու հանգստաւէտ վայրերի վայելքը, եկել են Հայաստան իրենց վրձինի գեղարուեստական արտադրութիւնը հրապարակ բերելու և միացնելու Խորհրդային Հայաստանի կառավարութեան մեծ ու վսեմ նպատակներին:[85]

Նկարիչ Թադևոսյանն, իր հերթին, հանդես գալով արվեստագետների անունից, նշում է. «Մեր ուժերը տրամադրելով Խորհրդային Հայաստանի կառավարութեան, որին շնորհակալութեան խօսք ունենք ասելու հայ նկարիչներս, այսպիսի ծանր օրերին մեր

[84] Ըստ՝ Տիմուս, «Ընկ. Յեղիշե Չարենցի դասախոսության առթիվ», *Խորհրդային Հայաստան*, 13 ապրիլի 1923 թ.:
[85] «Հայ արուեստագէտների պատկերահանդէսի հանդիսաւոր բացումը», *Խորհրդային Հայաստան*, 22 հուլիսի 1921 թ.:

կառավարութեան կողմից մեզի ցոյց տւած լայն աջակցութեան և քաջալերանքին համար»: [86]

1920-ականներին աստիճանաբար ակտիվացող հայաստանյան գեղարվեստական դաշտի կայացման ու դրանում ներգրավված գործիչների համար համապատասխան պայմանների ապահովումն իր հերթին ստանձնել էր արդեն Խորհրդային Հայաստանի կառավարությունը: Այս կապակցությամբ նշանակալից պետք է համարել «գրական, գեղարւեստական աշխատաւորների ապահովութեան մասին» կառավարության՝ 1921 թվականի սեպտեմբերի 21-ի դեկրետը: Ըստ այդ դեկրետի՝ Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմների խորհուրդը որոշում էր հիմնել Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից գրական-գեղարվեստական ֆոնդ՝ հատկացնելով այդ նպատակի համար մեկ միլիարդ ռուբլի: «Ընդհանուր խորհրդային պարէն, հարւածային փայ և ամսական 500.000 ռուբլի թոշակ» էր հատկացվում Հայաստանում ապրող գրական-գեղարվեստական վաստակավոր գործիչներին: Հայաստանի Լուսժողկոմին կից հաստատվում էր գրական մրցանակաբաշխություն՝ հատկացնելով գրական-գեղարվեստական ֆոնդի սահմաններում այդ նպատակի համար մինչև կես միլիարդ ռուբլի: Պետական հրատարակչությանը հրահանգվում էր կատարել գրական, գիտական որակյալ գործերի գնում՝ ղեկավարվելով Լուսժողկոմին կից հիմնվելիք գրական ժյուրիի գնահատությամբ: Լուսժողկոմի տրամադրության տակ էր դրվում հինգերորդ խորհրդային տնտեսության վիլլան (նախկինում Արամյանի կալվածքը Լոռիում) գրական-գեղարվեստական աշխատանքի տուն կազմակերպելու համար:[87]

Պետականացման էին ենթարկվում եկեղեցուն պատկանող կրթական ու մշակութային հաստատությունները:[88] 1920 թվականի դեկտեմբերի 17-ի լուսժողկոմի հրամանով՝ էջմիածնի վանական ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը՝ «որպէս ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հիմնարկութիւններ Հայաստանի աշխատաւոր ժողովուրդների սեփականութիւն դառնալով» ենթարկվում էին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին և վերակազմվում վերջինիս կողմից նշանակվելիք կոմիսարի ղեկավարությամբ:[89] Առանձին հրամաններով հանրային օգտագործման նպատակով ցուցակագրման, իսկ անհրաժեշտության դեպքում բռնագրավման էին ենթարկվում Հայաստանում գտնվող գրադարանները, երաժշտական գործիքներն ու թատերական պիտույքները, հնագիտական արժեք ներկայացնող իրերն ու հուշարձանները:[90] Հայաստանի սահմաններում գտնվող գեղարվեստական և հնագիտական հուշարձանները և իրերը պահպանելու, ուսումնասիրելու և «ժողովրդական լայն մասսաների կրթական պահանջներին մօտեցնելու համար» հիմնվում էր Հնությունների ու գեղարվեստի պահպանման հանձնաժողով:[91]

---

[86] «Հայ արւեստագէտների պատկերահանդէսի հանդիսաւոր բացումը»:
[87] *Հ. Ս. Խ. Հ. դեկրետների և որոշումների հավաքածու,* 1921, թիվ 9, էջ 65-66:
[88] *Հ. Ս. Խ. Հ. դեկրետների և հրամանների ժողովածու*, էջ 16:
[89] *Հ. Ս. Խ. Հ. դեկրետների և հրամանների ժողովածու*, էջ 16:
[90] *Հ. Ս. Խ. Հ. դեկրետների և հրամանների ժողովածու*, էջ 97-98, 45, 82-83, 57-59: Դեկրետներում առանձին կետով նշվում էր, որ առաջին հերթին բռնագրավվում են այն երաժշտական գործիքները, որոնց տերերը չեն օգտվում դրանցից, և ապա՝ այն գործիքները, որոնց տերերը զբաղվում են երաժշտությամբ որպես «սոսկ սիրողներ»: Հատուկ ծանոթագրությամբ նշվում էր, որ պրոֆեսիոնալների և ուսուցիչների գործիքները չէին բռնագրավվելու: Այս առումով ուշադրության է արժանի նաև Աշոտ Հովհաննիսյանի միջնորդությամբ Լեոյին՝ «որպես խորհրդային բարձր կատեգորիայի աշխատակցի» գրադարանների բռնագրավման առնչությամբ «անձեռնմխելիության մանդատի» շնորհումը: Տե՛ս Վլադիմիր Ղազախեցյան, «Աշոտ Հովհաննիսյանը և խորհրդահայ մշակույթը», *Լրաբեր հասարակական գիտությունների,* 2000, թիվ 2, էջ 17:
[91] *Հ. Ս. Խ. Հ. դեկրետների և հրամանների ժողովածու*, էջ 57:

Այսպես, 1920-ականների մշակութային քաղաքականությունն ամբողջությամբ բխում էր ՆԷՊ-ի՝ մեղմ ու տևական բնույթից, ինչը գեղարվեստական կյանքում բնորոշվում էր խաղաղ ստեղծագործական աշխատանքին անցումով, անցյալի գեղարվեստական արժեքների յուրացմամբ և հեղափոխությամբ օրակարգային դարձած նոր՝ խորհրդային արվեստի կայացմանը ժամանակի հատկացմամբ:[92] Քաղաքական ռազմավարության այս շրջադարձն էր արձանագրում նաև Լենինը, երբ շեշտում էր խորհրդային երկրներում խաղաղ կազմակերպչական աշխատանքի անցնելու կարևորության մասին.

> Առաջ մենք ծանրության կենտրոնը դնում եյինք և պետք ե դնեյինք քաղաքական կռվի, հեղափոխության, իշխանությունը նվաճելու վրա և այլն: Իսկ հիմա ծանրության կենտրոնը փոխվում ե և մինչ այն աստիճան, վոր փոխանցվում ե խաղաղ կազմակերպական կուլտուրական աշխատանքին:[93]

1920-ականների Հայաստանում գեղարվեստական դաշտի կայացման հարցում առանցքային պետք է համարել նաև արվեստագետների և քաղաքական գործիչների միջև համագործակցության և փոխօգնության սկզբունքը: Այսպես, արվեստի գործիչներն ակտիվորեն ներգրավված էին վարչարարական, իսկ քաղաքական գործիչները՝ արվեստի շուրջ ծավալվող բանավիճային հարցերում:[94] Ընկերության և վստահության այս մթնոլորտում էր նաև, որ հնարավոր դարձավ գեղարվեստական կյանքի զարգացումն այն ժամանակ, երբ բացակայում էին նույնիսկ կենցաղային տարրական պայմանները:[95] Պատահական չէ ուրեմն, որ հենց հին սերնդի «ուղեկից» արվեստագետներն էին, որ,

---

[92] Նոր տնտեսական քաղաքականության ներդրման տարիներին հանրային բուռն քննարկումների առարկա էին դարձել արվեստի ու գրականության բնույթի շուրջ քաղաքական գործիչների և արվեստագետների մոտեցումները: Խորհրդահայ մեծամասնականների ըմբռնումների քննարկման համար տե՛ս Շահնազարյան, «Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև»: Քաղաքական առաջադրությը՝ տեղական պայմաններից ելնող նոր գեղարվեստի ստեղծումը, մարտահրավեր էր նաև մինչխորհրդային ժամանակներում ձևավորված գրողների շրջանակում: Եղիշե Չարենցի օրինակով քաղաքական նոր իրադրության պայմաններում ստեղծագործական բարդ երկփեղկումների առջև կանգնած գրողի ու նրա ստեղծագործական երկի հանգամանալից վերլուծություն է առաջարկում Սիրանուշ Դվոյանն իր «*Երկիր Նայիրին* կենցաղի ու քաղաքականության միջև» հետազոտության մեջ: Տե՛ս *Հայկական արդիությունների ուսումնասիրման նախագիծ*, ըստ՝ https://bit.ly/3CjhT5S, այց՝ 22 դեկտեմբերի 2022 թ.: Հարկ է նշել, որ պրոլետարական արվեստի բնույթի շուրջ հանրային բանավեճերն առանձնապես սուր բնույթ էին կրում գրականության ասպարեզում:

[93] Ըստ՝ Հովհաննիսյան, *Մեր հեռանկարները յեվ լենինիզմը*, էջ 64: Ռուսաստանում Նոր տնտեսական քաղաքականությամբ պայմանավորված գեղարվեստական կյանքի զարգացումների մասին տե՛ս Brandon Taylor, *Art and Literature Under the Bolsheviks,* h. 1 (London: Pluto Press, 1991), էջ 109-116:

[94] Արվեստի ու գրականության շուրջ հանրային բանավեճերի առնչությամբ տե՛ս Ալեքսանդր Մարտունի, «Պրոլետարական գրականության նվիրված «Մուրճ» ամսագրի N 1-ի առթիվ», *Խորհրդային Հայաստան*, 1, 2 դեկտեմբերի 1922 թ.; Արտաշես Կարինյան, «Մեր որերի արվեստը», *Խորհրդային Հայաստան*, 10 դեկտեմբերի 1922 թ.; Պողոս Մակինցյան, «Մեր անելիքը Թիֆլիսում», *Կարմիր աստղ*, 30 մարտի 1921 թ.; Տիմուս, «Ընկ. Յեղիշե Չարենցի դասախոսության առթիվ»; Ա. Կարինյան, «Հայ պրոլետարական գրողները յեվ գյուղացիական Հայաստանը», *Մարտակոչ*, 21 դեկտեմբերի 1923 թ.: Տե՛ս նաև Իրինա Շահնազարյան, «Արվեստ և քաղաքականություն. Չարենցի և Հովհաննիսյանի միջև 1920-ականների մի բանավեճի շուրջ», ըստ՝ *Չարենցը և իր ժամանակաշրջանը* (գիտաժողովի նյութեր) (Երևան: Ե. Չարենցի տուն-թանգարան, 2019), էջ 107-119:

[95] 1920-ականներին Հայաստանում քաղաքական գործիչների ու արվեստագետների միջև ընկերության առումով հիշատակման է արժանի լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի և նկարիչ Մարտիրոս Սարյանի միջև տեղի ունեցած հետաքրքրական մի դրվագ՝ այն ժամանակ, երբ Հովհաննիսյանը երկար համառելուց հետո ի վերջո համաձայնել էր Սարյանի՝ իրեն նկարելու առաջարկին: Հետագայում Հովհաննիսյանը հիշյալ դրվագը պատմելու էր իր ուսանողներին. «-Աշոտ, ամբողջ մի կուսակցություն ես ղեկավարում, չգիտեմ գլխավոր քարտուղար ես թե ինչ ես, չե՞ս կարողանում գլուխդ մի քանի ժամ պահես նկարչի համար ցանկալի դիրքում: Ես էլ արդարանալու համար դրությունից ելք գտա: Բացատրեցի, որ Շուշիում դպրոցի բարձր դասարանում սովորելու տարիներին ընկերներով գնում էինք մերձքաղաքային անտառ և ծառերից միրգ էինք քաղում, որ մի օր տանձենու ծառից ընկել եմ, վիզս վիրավորվել է և բուժվելուց հետո մնացել է ծուռ: Նկատեցի, որ բացատրությունս Սարյանին թվաց պարզունակ, չգոհացրեց: Նայեց, մեղմ ժպտաց ու շարունակեց.
-Աշոտ, ծուռ է ոչ թե վիզդ, այլ գլուխդ՝ իր ողջ պարունակությամբ, այդ թվում՝ ուղեղդ: Եթե մի քաղաքական գործիչ ու գիտնական իր փոքր ժողովրդի մեջ հասարակական-քաղաքական չորս հոսանք է տեսնում, թերևս ինչ որ բան իր տեղում չէ, ուղիղ չէ, շեղ է»: Ըստ՝ Նորայր Սարուխանյան, *Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին* (Երևան: Գիտություն, 2012), էջ 47-48:

կիսելով կոմունիստ ղեկավարների՝ արվեստի ու մշակույթի հանդեպ մոտեցումները, շահում էին վերջիններիս վստահությունն այնպիսի հարցերում, ինչպիսիք էին գեղարվեստական հաստատությունների հիմնադրման գործընթացները:[96] Իր հուշերում Սարյանը գրում է.

> Լուսավորության ժողկոմն իմ բարեկամ Աշոտ Հովհաննիսյանն էր: Նա ինձ հանձնարարեց ձեռնարկել մի շարք հաստատությունների՝ հնագիտության, կերպարվեստի, պատմության, ազգագրության թանգարանի և հնությունների պահպանության կոմիտեի կազմակերպումը: Պետք էր հիմնադրել նաև գեղարվեստական ուսումնարան ու նկարիչների ընկերություն:[97]

Նույն կերպ, ինչպես Առաջին հանրապետությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում, Թամանյանին վստահվեցին երկրի քաղաքաշինական և ճարտարապետական գլխավոր նախագծերը, որոնց թվում մայրաքաղաք Երևանի հատակագծման աշխատանքները: Թամանյանը խորհրդային կարգերին գաղափարապես ոչ համակիր, բայց իր երկրի ճակատագրով մտահոգ գործիչներից էր: Նա քաղաքական նոր իրադրության պայմաններում ըստ էության ելնում էր լուսավորության նոր օրակարգից, երբ նշում էր, թե «Ցարական իմպերիայի նախկին գյուղակ-գաղութը պիտի դառնա Հայաստանի մայրաքաղաքը»:[98] Թամանյանն այս կերպ Երևանի հատակագծմանը մոտենում էր իբրև ցարական կայսրության գաղութային լուծը թոթափող հեղափոխական շինարարության լուսավորական նախագիծ:

---

[96] Ավագ սերնդի մի շարք արվեստագետներ, որոնց թվում օրինակ՝ Գաբրիել Գյուրջյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Վահրամ Գայֆեջյանը, Սեդրակ Առաքելյանը, Ստեփան Աղաջանյանը և այլք, Հայաստան էին վերադարձել որպես դրսում կայացած և արվեստի որոշակի իդեալներ արդեն իսկ որդեգրած արվեստագետներ: Սա վկայում էր գեղարվեստական կյանքում մի կողմից նրանց ակտիվ գործունեության, մյուս կողմից՝ նոր արվեստի ստեղծման գործընթացներում նախընթաց շրջանի գեղարվեստական արժեքների յուրացման համոզմունքի մասին. համոզմունք, որը համընկնում էր Խորհրդային Հայաստանի ղեկավար գործիչների՝ պրոլետարական նոր արվեստ ստեղծելու որդեգրած ուղուն: Պատահական չէ, որ Ստեփան Աղաջանյանը հետագայում խոստովանում է. «Երբ հայրենիք վերադարձա, արդեն ձևավորված համոզմունքներով նկարիչ էի, լրիվ գիտակցում էի իմ անելիքները արվեստի բնագավառում, և ոչ մի ուժ չէր կարող սասանել իմ ընդունած սկզբունքները»: Ըստ՝ Էդվարդ Սարգսյան, *Նկարչի հուշերը* (Երևան: Լորենի, 2019), էջ 193:

[97] Սարյան, *Գրառումներ իմ կյանքից*, էջ 168-169:

[98] Ըստ՝ Սարյան, *Գրառումներ իմ կյանքից*, էջ 189:



Այսպես 1920-ականներին հիմնադրվող մշակութային հաստատությունների թվում էր նաև Ժողովրդական տունը (ներկայիս՝ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն): 1931 թվականին Սարյանի վրձնած այս կտավը պատկերում է Ժողտան շենքի կառուցման աշխատանքները: 1926-ին Թամանյանի կողմից նախագծված Ժողովրդական տունը կոչված էր արտացոլելու հեղափոխական «պաթոս ապրող» Խորհրդային Հայաստանի հասարակական ու քաղաքական «լիարյուն» կյանքը: Մինչդեռ կտավից առաջին հայացքից դիտողը ստանում է ոչ այնքան քաղաքային կյանքի, որքան գյուղական մոտիվներով տեսարանի տպավորություն: Սարյանն այս կերպ որսացել է երկրում քաղաքական նախագծի իրագործմանն ուղղված, հեղափոխական թափի տակ կարծես չնշմարվող աշխատանքի իրական պայմանները: Այսպես, երկրում մեծ թափով մեկնարկած մշակույթի հիմնարկայնացման գործընթացները տարվում էին այս շրջանում դեռևս կենսունակ՝ հայկական գյուղական կենցաղին ու բարքին բնորոշ ավանդական ձևերով: Այս է պատճառը, որ քաղաքականության և բարքի միջև այս լարումը Սարյանը ոչ միայն վրձնել, այլև դիպուկ կերպով արտահայտել է իր հուշերում.

> Թամանյանը տիտանական ջանքեր թափեց օպերայի շենքի կառուցման վրա: Ամեն ինչ արվում էր ձեռքի աշխատանքով: Շինարարությունը դեռ մեքենայացված չէր: Քարշող ուժը եզները, ձիերը, գոմեշները և էշերն էին, իսկ տեխնիկան՝ բահը, քլունգը:[99]

Գեղարվեստական դպրոց

Հայաստանի խորհրդային իշխանության գլխավոր խնդիրներից մեկն, ինչպես արդեն նշվեց, 1920-ական թվականներին պետության կայացման աշխատանքներին տեղում անմիջական օժանդակություն ցուցաբերելու համար համապատասխան կադրերի՝ գյուղատնտեսների, արհեստավորների, աշխատանքային դպրոցների համար անհրաժեշտ ուսուցիչների պատրաստումն էր: Հովհաննիսյանը նկատում է.

> Անհնարին է յաջողութեամբ առաջ տանել երկրի շինարարութեան սկսուած գործը առանց մասնագէտ ղեկավարների: Մեզանում դեռ չի սպառուել որակեալ աշխատաւորների կադրը: Սակայն չափազանց սուր է միջին մասնագէտների կարիքը:[100]

Այստեղից պարզ է, որ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը մտահոգված էր նախ և առաջ գործնական գիտելիքների և մասնավորապես՝ «արհեստագիտական-տեխնիքական» դասընթացների ուսուցմամբ: Այս առումով առանձնակի կարևորություն էին ներկայացնում ինչպես Հայաստանում ամերիկյան որբախնամ կազմակերպության՝ Մերձավորարևելյան նպաստի (ՄԱՆ), այնպես էլ Լուսժողկոմի խնամատարության տակ գտնվող որբերը: Ապագայում՝ «սոցիալական չարիքի» վերածվելու վտանգին ենթակա որբերը կրթության միջով անցնելով միայն կարող էին խուսափել «բարոյական անկումից» ու կայանալ որպես առաքինի սոցիալիստ քաղաքացիներ: Արհեստների ուսուցումը խրախուսվում էր, սակայն, ոչ միայն երկրի արտադրողականությունը բարձրացնելու համար, այլև այն պատճառով, որ արհեստներն առավել հեշտությամբ կյուրացվեին նաև կրթություն չունեցող որբերի կողմից: Այս համատեքստում է, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը հետամուտ է լինում Երևանում գեղարվեստական դպրոցի հիմնադրմանը:[101] Ինչպես նշում է դպրոցի հիմնադրման ակունքներում կանգնած Սարյանը.

---

[99] Սարյան, *Գրառումներ իմ կյանքից,* էջ 191: Այս առումով ուշադրության է արժանի նաև Մարտիրոս Սարյանի մասին քանդակագործ Արա Սարգսյանի հոդվածը, որտեղ նա պարզաբանում է 1920-ականներին ավանդական տնտեսության կենսունակ ձևերի ու արվեստի գործի միջև եղած հետաքրքրական կապերը: Այս կերպ Սարգսյանը 1920-ականների սկզբի Սարյանի գործերի բովանդակությունն ուղղակիորեն կապում էր այդ շրջանում գերիշխող տնտեսական ձևերի հետ. «20-ական թվականներին վարպետի պեյզաժներում տիրապետողը շրջապատի ինտիմ պատկերներն էին. երևանյան անկյուններ, գյուղական մոտիվներ՝ եզներով ու գութանով, ուղտի քարավաններ.... Այդ երևույթը շատ բնական էր ու անկեղծ, կյանքի և բնության հետ կապված նկարիչը այլ կերպ վարվել չէր կարող: Երկիրը նոր էր վերականգնվում, շինարարությունը դեռևս լայն թափ չէր ստացել, ինչպես այսօր, հողից բարիք ստանալու տեխնիկական միջոցները դեռևս հին էին»: Տե՛ս Արա Սարգսյան, *Հոդվածներ, ելույթներ, հուշեր* (Երևան: Սովետական գրող, 1982), էջ 52:

[100] Տե՛ս՝ «Լուսաւորութեան գործը Հայաստանում»:

[101] Արդեն 1921 թվականի օգոստոսին Լուսավորության կոմիսարիատի արտաքին գործերի ինֆորմացիոն բաժինը տեղեկացնում էր. «Մօտաւոր ապագայում Երևանի մէջ կը բացւի գեղարուեստական դպրոց մը զանազան ճիւղերով օժտուած, որ կոչւած է մեծ դեր խաղալու մեր իրականութեան մէջ», տե՛ս «Կերտողական արուեստի դպրոց», *Բիւլլետեն*, 1921, թիվ 4, էջ 12: 1925 թվականից դպրոցը վերանվանվել է Գեղարդ (Գեղարվեստա-արդյունաբերական) տեխնիկում, իսկ 1941 թվականից՝ կոչվել նկարիչ Փանոս Թերլեմեզյանի անունով: Հայտնի է, որ դեռ Առաջին հանրապետության շրջանում Հայաստանում գեղարվեստական դպրոց հիմնադրելու որոշում էր կայացվել: Դպրոցի տիպը, ծրագիրը, կանոնադրությունը մշակելու համար ստեղծվել

> Դպրոցը պետք ե կազմակերպված լինի այնքան նպատակահարմար հիմունքներով, վոր աշակերտները (մեծ մասամբ վորբեր) իրենց ուսումնական շրջանում կարողանան ձեռք բերել այնպիսի գործնական արվեստների գիտություն, վորով հնարավորություն ունենան իրենց սովորածը իսկույն կիրառել յերկրի շինարարության և մասնավորապես ճարտարարվեստի արտադրողական գործերում:[102]

Այսպես, որբերին նկարչական կրթություն տալուն զուգահեռ, դպրոցը շեշտ էր դնում հատկապես արհեստների վրա: Բացի նկարչական և քանդակագործական բաժիններից՝ դպրոցում պետք է գործեին նաև գորգագործական, խեցեգործական (բրուտագործական), ոսկերչական, ձեռագործական, ասեղնագործական արհեստանոցներ. արհեստանոցներ, որոնք էլ պետք է ելնեին «ամեն ինչ կեանքի համար» սկզբունքի գործարկումից: Սարյանի խոսքով. «Դպրոցն արտադրում ե ամեն ինչ կենսական գեղարվեստական պահանջներին բավարարելու համար և տեղական և ընդհանուր մասշտաբով: Այնպես վոր դպրոցի արտադրած իրերն ի նկատի յեն ունենալու նաև արտասահմանյան սպառող շուկան»:[103] Արհեստանոցներում արտադրված գեղարվեստական իրերի վաճառքը, ինչպես նաև պետական և մասնավոր անձանցից պատվերների ընդունումը որոշ չափով օժանդակում էին դպրոցի նյութական ծախսերը հոգալուն: Դպրոց էին ընդունվում մեծամասամբ 13-16 տարին լրացած երեխաները: Մյուս քաղաքացիներին կրթության հնարավորություն տալու համար դպրոցը գործում էր ինչպես առավոտյան, այնպես էլ երեկոյան ժամերին: Նկարչական կրթությունը թե՛ քանդակագործական բաժնի և թե՛ արհեստանոցների աշակերտության համար պարտադիր էր: Բացի գործնական պարապմունքներից՝ դպրոցում դասավանդվում էին նաև հետևյալ առարկաները՝ «պրոէկցիա», «կերպարուեստի տեսութիւն և արուեստների պատմութիւն», «զարդանկարչութիւն», «պլաստիկական անատոմիա» և այլն:

Այս կերպ՝ ընտանեկան միջավայրից զրկված որբերը կարել, գործել և այլ արհեստներ սովորելով գործնականում կարող էին պահել իրենց գլուխը՝ միաժամանակ նպաստելով գեղարվեստական արդյունագործության զարգացմանը:

1920-ականներին պետության կայացման գործընթացներում արվեստին հատկացված դերակատարությամբ էր միաժամանակ պայմանավորված Խորհրդային Հայաստանում նկարչական կրթությանը հատուկ ուշադրություն դարձնելու հանգամանքը: 1920-ականներին հայաստանյան արվեստային դաշտի բուռն խմորումներն իրենց անդրադարձն էին գտնում նաև Գեղարվեստական դպրոցում: Սա պայմանավորված էր նաև նրանով, որ դպրոցում էին դասավանդում 1920-ականներին գեղարվեստական տարբեր ուղղություններ որդեգրած այնպիսի արվեստագետներ, ինչպիսիք էին, օրինակ, Գաբրիել Գյուրջյանը, Կարո Հալաբյանը, Արա Սարգսյանը, Վահրամ Գայֆեջյանը,

---

էր հատուկ հանձնաժողով, որի կազմում էին նաև Եղիշե Թադևոսյանը, Գարեգին Լևոնյանը, Գաբրիել Տեր-Միքելյանը և Փանոս Թերլեմեզյանը: Այս մասին տե՛ս «Տեղական կեանք. գեղարուեստական դպրոց Հայաստանում», *Ժողովրդի ձայն*, 3 հուլիսի 1919 թ.:

[102] «Գեղարվեստական տեխնիքական դպրոցի ցուցահանդիսի բացման առթիվ», *Խորհրդային Հայաստան*, 24 հունիսի 1923 թ.: Որքան էլ օգտակար էր արհեստների ուսուցումը պետության կայացման աշխատանքներին նպաստելու տեսակետից, պետք է նշել, որ որբերի՝ մեծապես գործնական ուսուցման վրա կենտրոնացումն ուներ նաև իր ցավալի հետևանքները: Ժամանակի մեծ մասը գործնական արհեստներ սովորելուն, ինչպես նաև գյուղատնտեսական գիտելիքներ ձեռք բերելուն տրամադրելը ստվերում էր թողնում երեխաների հանրակրթական ուսուցումը: Նորա Ներսեսյանը գրում է. «Երբեմն որոշ որբերի առանձնահատուկ տաղանդներ և նախընտրություններ վատնվում էին արհեստանոցներում և հատկապես դաշտային ու հողագործական աշխատանքների վրա»: Տե՛ս Ներսեսյան, *Որբաքաղաքը*, էջ 221:

[103] Հ. Ն., «Գեղարվեստական թանգարանը յեվ գեղարվեստական տեխնիկական դպրոցը Խորհրդային Հայաստանում (ինտերվյու նկարիչ Մ. Սարյանի հետ)», *Մարտակոչ*, 29 մարտի 1924 թ.:

Ստեփան Աղաջանյանը և այլք: Այս առումով հետաքրքրական են դպրոցի ուսուցիչների և աշակերտության միջև «մտերմիկ կապերը» պարզող նկարիչ, դպրոցի շրջանավարտներից Էդվարդ Սարգսյանի հուշերը: Նա գրում է. «Ուսանողության և դասատուների միջև ստեղծվել էր մտերմիկ կապ: Մենք ոչ միայն մեր ուսուցիչների ստեղծագործական աշխատանքների, այլև նրանց առօրյա կյանքի ականատեսն էինք: Ստեղծագործական հարցերի շուրջ երկարատև զրույցներ էինք ունենում, ստանում էինք բազմակողմանի կրթություն»:[104] Այսպես, Գեղարվեստական դպրոցի հաճախակի կազմակերպվող ցուցահանդեսները վկայում են Խորհրդային Հայաստանի արվեստային միջավայրում աշակերտների ակտիվ մասնակցության մասին. ցուցահանդեսներ, որոնք միևնույն ժամանակ քննադատության առիթ էին տալիս մամուլի էջերում՝ այդ կերպ աշակերտությանն առաջադրելով 1920-ականների հեղափոխական գաղափարաբանությանը բնորոշ պահանջներ: Այս մասին *Խորհրդային Հայաստան* թերթում կարդում ենք.

> Ուսուցիչները պարտավոր են աշակերտների մեջ հետաքրքրություն շարժել դեպի պրոլետարական կյանքը: Անշուշտ մենք չենք պահանջում այսքան կարճ ժամանակամիջոցում գոյություն ունեցող մի դպրոցից պրոլետարական արվեստի սկիզբ, սակայն առաջիկայում այդ ուղղությամբ մեծ աշխատանք պիտի թափվի:[105]

Եվ այդուհանդերձ 1920-ականներին Գեղարվեստական դպրոցը ևս զերծ չէր մնում կրթական հաստատությունների հիմնադրման ընթացքում առաջացած բարդություններից: Նկարչական և քանդակագործական նյութերի, ներկերի, վրձինների, ինչպես նաև արհեստանոցների համար անհրաժեշտ գործիքների բացակայությունն իր հետևանքն էր թողնում աշակերտների գործերի որակի վրա: Նկարչական ստուդիայի վարիչ, նկարիչ Վահրամ Գայֆեջյանը նկատում է.

> Դպրոցը կարիք ունի ինչպէս իւղանկարների [հավանաբար յուղաներկերի՝ Լ. Շ.], նոյնպէս և նկարչական այլ պիտոյքների, դասական առարկաների, որոնք Հայաստանում չեն ճարւում. պակասում է կահաւորումը: Այդ բոլորն արգելք են հանդիսանում դպրոցական պարապմունքներն արդիւնաւէտ դարձնելու: Ոսկերչանոցն ու բրուտանոցն արդիւնաւէտ դարձնելու համար անհրաժեշտ է, որ պրիմիտիւ գործիքները փոխարինւեն կատարելագործւած մեքենաներով ու գործիքներով:[106]

Դպրոցին հատկացված շենքն իր հերթին ոչ միայն անհարմար էր իբրև նկարչական հաստատություն, այլև այնքան փոքր, որ արգելք էր հանդիսանում այլ արհեստանոցներ բացելու և դասավանդման նոր առարկաներ մտցնելու համար: Բացի այդ՝ ընդհանուր շենքի բացակայության պատճառով արհեստանոցները ցրված են եղել քաղաքի տարբեր մասերում, ինչն, անշուշտ, անհետևանք չէր մնում որբերի կրթության համար: Այս առումով

---

[104] Տե՛ս Սարգսյան, *Նկարչի հուշերը*, էջ 157:

[105] Ռ. Վանիկ, «Գեղարվեստական-տեխնիքական դպրոցի ցուցահանդեսը», *Խորհրդային Հայաստան*, 7 հունիսի 1925 թ.:

[106] Ըստ Արամ Երեմեան (խմբ.), *Հայաստանի նկարիչների ալմանախը* (Փարիզ: Արագած, 1926), էջ 9-10: Մեկ այլ տեղ՝ *Խորհրդային Հայաստան* թերթում կարդում ենք. «Տնտեսական սուղ միջոցները դպրոցին հնարավորութիւն չեն տալիս նկարչութեան համար անհրաժեշտ նիւթերն ու միջոցները ձեռք բերելու: Երեխաները նկարում են ամենաանպետք ներկերով ու իւղով, վոր արգելք ե հանդիսանում աշխատանքի բարերար արդիւնքներին: Խորհրդային կարգերում տաղանդավոր պատանիները պետք ե խրախուսանքի արժանանան պետական համապատասխան մարմինների կողմից: Անհրաժեշտ ե, վոր Լուսժողկոմատը իր վրա վերցնի շնորհալի ու նիւթապես նեղ վիճակում գտնվող նկարիչ աշակերտների ապահովութիւնը-նպաստի միջոցով»: Տե՛ս Մ., «Գեղարվեստ. Երևանի նկարչական դպրոցը», *Խորհրդային Հայաստան*, 11 մայիսի 1922 թ.:

հատկապես հետաքրքրական է դպրոցի հիմնադիր անդամներից նկարիչ Գաբրիել Գյուրջյանի՝ «Միջմոլորակային հաստատություն» ինքնին ուշագրավ վերնագրով հոդվածը: Այսպես, Գեղարվեստական դպրոցի կազմակերպած հերթական ցուցահանդեսներից մեկում ոսկերչական արհեստանոցի ցուցանմուշների բացակայությունն առիթ էր Գյուրջյանի համար անդրադառնալու արհեստանոցի և նկարչական դպրոցի միջև առկա փոխհարաբերություններին: Սուր քննադատելով «անկոնտրոլության գերիշխանությունը վայելող» ոսկերչական արհեստանոցի՝ նկարչական դպրոցից «անջատողական նկրտումներ ունենալը», Գյուրջյանի մտահոգության կենտրոնում դրա պատճառով տուժող որբերն էին: Վերջիններս մոռանում էին նկարչական իրենց «պրյոմները» և «ինչ վոր բաներ» արտադրելով հանդերձ՝ ըստ էության հիմնովին չէին յուրացնում նաև իրենց արհեստը՝ ոսկերչությունը: Գյուրջյանը գրում է.

> Իր ծրագրով վոսկերչանոցը գեղարվեստական դպրոցի բաղադրիչ մասն ե, իր ցուցանակով նա Լուսժողկոմատի հովանավորության տակ ե գտնվում, ըստ իր վարիչի հայտարարության՝ բարոյական կապերով ե կապված գեղ. դպրոցի հետ.... Ինչպես միշտ, «յոթը դայակ ունեցող յերեխան հսկողությունից զուրկ կը լինի»: Վորբ աշակերտները, այդքան խնամակալ ունենալով հանդերձ, առայժմ «բարեխնամորեն» շահագործվում են:[107]

Եվ այսպես, դպրոցը մի կողմից գեղարվեստական արդյունագործության զարգացմամբ պետք է հետամուտ լիներ պետության կայացմանը, մյուս կողմից՝ նկարիչների ու քանդակագործների պատրաստմանը: Արդեն 1927 թվականին դպրոցից դուրս են գալիս առաջին շրջանավարտները, որոնց թվում էին նկարիչներ Միեր Աբեղյանը, Սեդրակ Ռաշմաճյանը, Բաբկեն Քոլոզյանը, Արմեն Չիլինգարյանը և այլք: Հետագայում ևս դպրոցն իր վճռական դերը պետք է ունենար հայ բազմաթիվ արվեստագետների՝ Հովհաննես Զարդարյանի, Գրիգոր Խանջյանի, Ղուկաս Չուբարյանի, Արա Բեքարյանի, Մարիամ Ասլամազյանի և այլոց ձևավորման գործում: 1921 թվականին հիմնադրված Գեղարվեստական դպրոցը, փաստորեն, հնարավորություն ստեղծեց նաև սեփական երկրում արդի մասնագիտական նկարչական կրթություն ստանալու համար.

> Փոխանակ արևմուտքում, սրանից հետո, մեր գեղարվեստական դպրոցում, մեր ստեղծագործ ժողովրդի, հեղափոխական աշխատավոր մասսաների ծոցում պիտի սովորեն և զարգանան մեր նկարիչներն ու արծանագործները: Նրանից հետո միայն նրանք պիտի դառնան դեպի Արևմուտքը, դեպի այդ խոշոր արվեստը, միացնելով Արևմուտքի կատարելագործված տեխնիկական և գեղարվեստական ըմբռնողությունն Արեվելքի արևավառ արբեցնող գույների հետ:[108]

---

[107] Գ. Գյուրջյան, «Միջմոլորակային հաստատություն», *Խորհրդային Հայաստան*, 13 հունիսի 1924 թ.:
[108] Վանիկ, «Գեղարվեստական-տեխնիքական դպրոցի ցուցահանդեսը»:

Վերջաբանի փոխարեն

Այսպես, 1920-ական թվականներին սեփական ժողովրդի լուսավորությամբ մտահոգ պետական գործիչների և իրենց իսկ ազգային մշակույթի զարգացմանը հետամուտ արվեստագետների համատեղ ջանքերի շնորհիվ Խորհրդային Հայաստանում հիմք է դրվում կրթական, մշակութային ու գեղարվեստական հաստատությունների սկզբնավորման գործընթացին: Կազմավորվում են Պետական համալսարանը, Ժողովրդական տունը, Երաժշտական ստուդիան, Պետական թատրոնը, Հնությունների պահպանության կոմիտեն, Գեղարվեստական դպրոցը, Կերպարվեստից աշխատավորների ընկերությունը և այլն: Այս շրջանում է, որ հայերենը հռչակվում է պետական լեզու: Պատահական չէ, որ 1920-ականներին հենց ազգային մշակութային վերելքի իրողությամբ էին մեծամասնական ղեկավարներն այդքան հետևողականորեն պաշտպանում նաև Խորհրդային Հայաստանի անկախ պետականության լինելիության գաղափարը: Մյասնիկյանը նշում է. «Արդի Հայաստանն *ազգային խորհրդային մի պետություն է*, ինքնուրույն պետություն, հայկական լեզվով, հայ կուլտուրայով զարգացող և հայի կյանքն ազնվացնող մի պետություն» (ընդգծումը՝ Մյասնիկյանի):[109] Այսօր՝ անկախ պետականության պայմաններում, թերևս օրինաչափ է թվում մեզանում մշակութային այս հաստատությունների գոյությունը: 1920-ականների հասարակական, տնտեսական, քաղաքական լրջագույն մարտահրավերների համատեքստում, սակայն, ինչպես տեսանք, դրանց հիմնադրումն առաջին հերթին հնարավոր դարձավ սեփական պետության կայացմամբ տոգորված արվեստագետների և քաղաքական գործիչների ցուցաբերած կամքի, նվիրական աշխատանքի և անձնական զոհողությունների գնով: Դեռ 1920-ականներին Հարություն Սուրխաթյանն, անդրադառնալով մշակույթի և գեղարվեստի ասպարեզում Հայաստանի խորհրդային իշխանության ցուցաբերած ջանքերին, գրում էր.

> Հարկաւ հեշտ է թւելը այդ նոր կուլտուրական և գեղարւեստական հաստատութիւնները, սակայն որքան դժւարին գործ էր նրանց գլուխ բերելը մի երկրում, ուր ամեն ինչ աւերւած էր ու թալանւած, ուր չէր կարելի գտնել ոչ երաժշտական գործիք, ոչ գրքերի պահեստ, ոչ սեղան ու աթոռ, ուր մնաց թէ թատրոնական կարևոր պիտոյքներ և այլն և այլն:[110]

[109] Մարտունի, *Խորհրդային Հայաստանի ուղին*, էջ 47: Թե ինչպիսի դժվարություններով էին Հայաստան բերվում գիտական, գեղարվեստական ու հնագիտական արժեք ներկայացնող իրեր, և թե տեղում ինչ քայլեր էին ձեռնարկվում գեղարվեստական դաշտի կայացման համար տե՛ս օրինակ՝ Ղազախեցյան, «Աշոտ Հովհաննիսյանը և խորհրդահայ մշակույթը»; «Նոր նվերներ Պետական թանգարանին», *Խորհրդային Հայաստան*, 15 մայիսի 1925 թ.; Սուրխանեան, «Գիտական. Մի թանկարժեք ձեռագիր», *Խորհրդային Հայաստան*, 5 մայիսի 1922 թ.; «Տեսակցութիւն ընկ. Պ. Մակինցեանի հետ», *Խորհրդային Հայաստան*, 13 մայիսի 1922 թ.; «Հայաստանի Լուսժողկոմատի գործերից», *Կարմիր աստղ*, 6 մայիսի 1922 թ.:
[110] Սուրխաթ, «Կուլտուր-կրթական գործը Խորհրդային Հայաստանում»: